

Մ Ա Ս I

Հ Հ Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ջ Ե Կ Ո Ւ Յ Յ Ը

Ս Ո Ց Ի Ա Լ - Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ջ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ե Վ Հ Ա Ր Կ Ա Բ Յ Ո Ւ Ջ Ե Տ Ա Յ Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Մ Ա Ս I - Ա

2005 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականություն

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի, Հակակոռուպցիոն ռազմավարության և ՀՀ 2005-2007թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի պահանջները՝ 2005 թվականին տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու ձեռք բերված տնտեսական աճի բարձր կայուն տեմպերի պահպանմանը, մակրոտնտեսական կայունության ապահովմանը, բնակչության, հատկապես սակավ ապահով խմբերի կենսամակարդակի բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը, գործազրկության շարունակական նվազեցմանն ու դեռևս առկա սոցիալական և տնտեսական այլ հիմնախնդիրների լուծմանը:

Արդարադատություն և օրենսդրության կատարելագործում

2005 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է հասարակական հարաբերությունների կարգավորման իրավական մեխանիզմների կատարելագործումը թե օրենսդրության կատարելագործման և թե իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ: Հատկապես կարևորվում են Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումները:

Թե օրենսդրական և թե իրավակիրառական բնագավառներում զարգացումը պետք է գնա տնտեսական դաշտում մրցակցության ուժեղացման և գործարարության միջավայրի բարելավման ուղղությամբ: Հատկապես պետք է բարելավվեն գրավի իրավունքի իրացման ընթացակարգերն այն հաշվով, որ հնարավորինս արագ իրացվի այդ իրավունքը:

Կարևորվում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը, որը նոր փուլ կնշանավորի տնտեսական դաշտի ազատականացման առումով:

Կընդունվեն աշխատանքային նոր օրենսգրքի գործողությունն ապահովող ավելի քան քսան ենթաօրենսդրական ակտեր, որոնք նպատակաուղղված են լինելու շուկայական հարաբերություններին հարիր աշխատանքային հարաբերությունների ձևավորմանը՝ նպաստելով թե գործատուի և թե աշխատողի իրավունքների, օրինական շահերի պաշտպանությանը:

2004 թվականին ՀՀ ընտանեկան օրենսգիրքի և «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումով պայմանավորված՝ բարեփոխումներ կիրականացվեն բնագավառի ենթաօրենսդրական կարգավորման ոլորտում և քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում: Միջոցներ կձեռնարկվեն համակարգի համակարգչայնացման ուղղությամբ: Համակարգչայնացման խնդիրներն ամբողջական լուծում կստանան դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում:

2005 թվականին կշարունակվի քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը՝ նպատակ ունենալով ապահովելու.

- քրեակատարողական համակարգի, որպես պետական-իրավական, սոցիալ-տնտեսական և հոգեբանա-մանկավարժական հաստատությունների բազմաֆունկցիոնալ համալիրի, կայուն գործունեությունը.
- գոյություն ունեցող ենթակառուցվածքների և նրանց նյութական բազայի կատարելագործումը, օրենսդրությամբ նախատեսվող նոր պատժատեսակների կիրառման համար շինությունների կառուցումը և առկա շինությունների վերակառուցումը.
- պատժի կրման պայմանների և կարգի հետագա հումանիզացումը միջազգային իրավական չափանիշներին համապատասխան, դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների առավել լիարժեք պաշտպանությունը, նրանց պահելու պայմանների բարելավումը, դատապարտյալների բուժապասարկման և զբաղվածության կազմակերպման հիմնախնդիրների լուծումը.

- դատապարտյալների ուղղման, սոցիալական վերականգնման (սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիա) համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ այդ գործին հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների ներգրավմամբ:

Հայաստանի Հանրապետության և Միջազգային Չարգացման Ընկերակցության վարկային համաձայնագրին համապատասխան, 2005 թվականին կշարունակվի դատաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացումը: Նախատեսվում է շարունակել դատարանների շենքերի կառուցում, վերակառուցումը և կահավորումը:

Ծրագրի շրջանակներում կշարունակվի դատական համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացումը: Կնախաձեռնվի դատավորների բարձրագույն դպրոցի ստեղծումը:

Կավարտվի իրավական տեղեկատվության բաղադրիչի շրջանակներում տարվող աշխատանքը ՀՀ օրենսդրության համակարգման և իրավական տեղեկատվության մատչելիության ապահովման ուղղությամբ:

Նույն ծրագրի շրջանակներում կշարունակվի իրավական թեմաներով «Իմ իրավունքը» հեռուստատեսային հաղորդաշարի թողարկումների հեռարձակումը:

Արտաքին քաղաքականություն

2005 թվականին ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակներն են շարունակելու լինել:

- երկրի անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության և ժողովրդավարության հաստատումը, պետությունների միջև իրավահավասար և գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը, լարման օջախների հնարավոր բռնկումների կանխարգելումը, Դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և արդարացի կարգավորումը,
- երկրի հարաճուն զարգացմանը, տնտեսական առաջընթացի, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավմանը, ժողովրդավարական բարեփոխումների բարեհաջող անցկացմանը, մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար բարենպաստ արտաքին պայմանների ձևավորումը:

Հայրենիքի և սփյուռքահայ համայնքների հարաբերություններում մեծ դեր են խաղում մեր արտաքին քաղաքականության օղակները և տվյալ երկրում գործող ՀՀ ներկայացուցչության և հայ համայնքի միջև ձևավորվող հարաբերությունների որակը, որը մեծապես պայմանավորում է հայրենի պետության հեղինակության աստիճանը տվյալ համայնքում:

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն են.

ա) ընդհանուր քաղաքականության ոլորտում`

- ՀՀ մասնակցությունը համաշխարհային նշանակության գործընթացներին, հատկապես ահաբեկչության դեմ պայքարին,
- ՀՀ ակտիվ ներգրավվածությունը միջազգային կարևորագույն կազմակերպություններում,
- Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի հետ փոխհարաբերությունների զարգացումը, Եվրոպական, Եվրատլանտյան և հետխորհրդային ինտեգրացման կառույցներում Հայաստանի համապատասխան մասնակցությունը:
 - բ) տարածաշրջանային քաղաքականության ոլորտում`
- անմիջական հարևանների` Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական փոխհարաբերությունների հետագա զարգացումը,
- Թուրքիայի հետ փոխհարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև տարածաշրջանային կայունության ամրապնդումը և համագործակցության ծավալումը:

Թվարկված խնդիրների հաղթահարումը նպաստելու է` երկրի անվտանգության ապահովմանը, տնտեսական առաջընթացին, արտաքին ներդրումների իրականացմանը, արտաքին առևտրի ծավալների աճին, տրանսպորտային նոր երթուղիների ձևավորմանը և հայրենական արտադրանքի արտահանման պայմանների բարելավմանը, տնտեսական բարեփոխումների իրականացմանը:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում աշխատանքները նպատակաուղղվելու են տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Կշարունակվի առանձին մարզերի ու տարածքաշրջանների առավել կարևոր հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի, ինչպես նաև սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների հայեցակարգային ծրագրի իրականացումը:

2005 թվականին կավարտվեն Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի տարածքային զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման աշխատանքները: Ծրագրերի մշակումից հետո Տավուշի և Գեղարքունիքի մարզերում կիրականացվեն ներդրումային փորձնական ծրագրեր, որոնց նպատակը ներդրողներին մարզերի իրական տնտեսական հնարավորությունները ներկայացնելն է:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետ համագործակցությունը ապահովելու նպատակով մշակվել է և ՀՀ Ազգային ժողովին կներկայացվի տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վարչական և մասնագիտական արդյունավետ վերահսկողության վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Ազգային Ժողովում անցել է առաջին ընթերցումը և ամենայն հավանականությամբ կընդունվի մինչև այս տարվա վերջը: 2005 թվականին

կիրականացվեն համալիր միջոցառումներ տեղական ինքնակառավարման համար համակարգային նշանակություն ունեցող այս օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովելու ուղղությամբ:

2005 թվականին Երևանի թաղային և քաղաքային համայնքները գույքահարկի բազաների մասին տեղեկատվությանը կտիրապետեն ամբողջապես՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով:

Կրթություն

Հայաստանում կրթությունն առավել կարևորվող և առաջնային համարվող բնագավառներից է: Ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը՝ որպես միջազգային ասպարեզում երկրի մրցակցությունն ապահովելու գրավական: Ներկա պայմաններում այդ խնդրի իրագործումը հնարավոր է միայն համակարգի աստիճանական բարեփոխման միջոցով, որին և ուղղված են լինելու ՀՀ կառավարության քայլերը 2005 թվականին:

Բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման նպատակով 2005 թվականին կավարտվի հանրակրթական բոլոր դպրոցների անցումը ֆինանսավորման նոր ձևի և խորհուրդներով կառավարման համակարգի (ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի թիվ 444 որոշում):

Ֆինանսավորման՝ ըստ աշակերտների թվի բանաձևով հաշվարկը չի կիրառվի ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի թիվ 773 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված՝ աշակերտների թվից անկախ ֆինանսավորվող հանրակրթական դպրոցների նկատմամբ, որոնց ֆինանսավորման չափը որոշվում է ըստ դասարան-կոմպլեկտների թվի:

Նախատեսվում է 2005 թվականից սկսած յուրաքանչյուր տարի վերապատրաստել, վերաորակավորել և ատեստավորել ուսուցիչների առնվազն 20%-ին՝ շարունակելով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման գործընթացը:

Աշխատանքներ կծավալվեն համայնքային և ծնողական լայն հասարակությանը դպրոցի կառավարման և զարգացման գործընթացին մասնակից դարձնելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 593 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագիրը» հիմք է ընդունվել 2005 թվականի կրթական հաստատություններին ուսումնական շենքերով ապահովման և դրանց հիմնանորոգման անհրաժեշտության վերաբերյալ հաշվարկների համար:

Ուսումնական գույքի մասով առավել առաջնային է դպրոցներն աշակերտական սեղան-նստարաններով ապահովելու հարցը, որին զուգահեռ շարունակվելու է դպրոցներում գազով աշխատող կաթսայատների կառուցումը:

Նախատեսվում է լրացուցիչ ծառայությունների ոլորտի ընդլայնում՝ արտադպրոցական կրթական հիմնարկների տարբեր տեսակների զարգացում, կրթության բովանդակության բարելավում, ըստ հետաքրքրությունների դպրոցականների պահանջարկի բավարարում:

Ինչպես նշված է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում, 2005 թվականին կրթության ոլորտի հիմնական գերակայություն է համարվում տարրական, հիմնական և միջնակարգ

ընդհանուր կրթությունը՝ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Նշվածի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջնակարգ կրթությունը միայն կարող է երաշխիք լինել հետագա մասնագիտական կրթություն ստանալու համար: Հավասարապես մատչելի և որակյալ հիմնական ընդհանուր կրթությունը հանդիսանում է հասարակության կրթվածության և գրագիտության մակարդակի բարելավման, աշխատանքի շուկա մտնելու համար անհրաժեշտ առաջնային գիտելիքների ապահովման և կրթությունը հետագայում շարունակելու կարևոր նախապայման:

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ բավարար հիմքեր է ստեղծում ավագ դպրոցում և մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար:

2005 թվականին նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա 2005 թվականին բարձրացնել ուսուցիչների միջին ամսական աշխատավարձը 65.3 %-ով՝ հասցնելով շուրջ 50.5 հազար դրամի՝ մոտավորապես ապահովելով ուսուցիչների տարեկան միջին աշխատավարձի հավասարեցումը մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի չափին: Նույն տոկոսներով կբարձրացվի նաև վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը և կկազմի 51.7 հազար դրամ: Ուսումնասօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը բարձրացման արդյունքում կկազմի 21.2 հազար դրամ:

Անհրաժեշտ է շարունակել և խորացնել կրթական համակարգի ռացիոնալացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները, որոնք ուղղված են լինելու կրթության ոլորտում մարդկային և ֆիզիկական կապիտալի ավելի արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այս նպատակով, անհրաժեշտ է՝

- ապահովել տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով,
- դպրոցաշինության իրականացման նպատակով 2005 թվականին նախատեսել ֆինանսական միջոցներ,
- շարունակել սեփական կաթսայատներով ջեռուցման համակարգի ներդրումը (համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 593 որոշման),
- ապահովել դպրոցներն աշակերտական սեղան-նստարաններով,
- բարձրացնել հատուկ դպրոցներում սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը՝ 2005 թվականին 20 տոկոսով:

Արդյունավետության բարձրացման ուղղությամբ հանրակրթության ոլորտում, մասնավորապես, նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 2004-2005 թթ. ուսումնական տարվանից ուսուցչական անձնակազմի հիմնական ուսումնական ծանրաբեռնվածության բարձրացում՝ շաբաթական մինչև 22 ժամ,

- դպրոցներում աշակերտների օպտիմալ թվաքանակի սահմանում, անհրաժեշտության դեպքում դպրոցների միավորում, թերհամալրված դասարանների վերահամալրում, խիստ թերհամալրված դասարանների դեպքում՝ երկու, երեք դասարանների համախմբում, դպրոցների տիպերի փոփոխություն՝ պահպանելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 25-ի N 773 և 2002թ. դեկտեմբերի 5-ի N 1937-Ն որոշումներով սահմանված սկզբունքները,
- հատուկ դպրոցների նախապատրաստում ըստ աշակերտների թվի փորձնական ֆինանսավորման համակարգի անցման,
- 2005 թվականին հատուկ դպրոցների տնօրենների, խորհրդի անդամների և հաշվապահների վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Հայաստանի Հանրապետության և Միջազգային Չարզացման Ընկերակցության միջև 2004 թվականի մարտի 24-ին ստորագրվել է «Կրթության որակի և համապատասխանության» վարկային համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-97-Ն հրամանագրով 2004 թվականի հունիսի 1-ին: Ծրագրի նպատակն է կրթության ոլորտի արդյունավետության բարելավումն ու ամրապնդումը, դպրոցական կրթության համակարգի որակի և համապատասխանության բարձրացումը, կրթության համակարգում գնահատման գործառնությունների բարելավումը:

Այս Ծրագրի շրջանակներում կիրականացվի.

- Հանրակրթության պետական չափորոշիչների և հենքային ուսումնական պլանի համալիր փաստաթղթի (Հանրակրթության պետական կրթակարգի) և գնահատման համակարգի ստեղծում, որի նպատակն է արդիականացնել հանրակրթության բովանդակությունը, հանրակրթության հիմնական առարկաների ծրագրերը և ներդնել որակի վերահսկման ու սովորողների գիտելիքների գնահատման միասնական նոր համակարգ:
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) մշակում և ներդրում դպրոցներում, որի նպատակն է ՏՀՏ-ն ներդնել կրթության գործընթացում որպես ուսուցման և դասավանդման ժամանակակից միջոց՝ նպաստելով սովորողների առաջադիմության բարձրացմանը:
- Համակարգի կառավարման և արդյունավետության մասով շարունակվելու է հանրակրթության ոլորտում բարեփոխումները, բարձրացվելու է հանրակրթական համակարգի գործունեության արդյունավետությունը և զարգացվելու է հանրակրթության ոլորտի աշխատողների գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

Կրթության ոլորտում, վերոնշյալ վարկային ծրագրից բացի, 2005 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն նաև Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում: Այս վարկային ծրագրով նախատեսվում են, մասնավորապես, մի շարք համայնքների դպրոցների շենքերի վերանորոգման և դպրոցների սեփական կաթսայատների կառուցման աշխատանքներ, ինչպես նաև դպրոցները ապահովել աշակերտական սեղան-նստարաններով:

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ պետությունը, դրանով իսկ, բավարար հիմքեր է ստեղծում մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով հավասարության խնդիրներին:

Թեև միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառները դիտվում են նպատակների երկրորդ մակարդակում, այդուհանդերձ, այս ոլորտներում քաղաքականության հիմնական նպատակներն են շուկայական տնտեսությանը համապատասխանության ապահովումը, որակի բարձրացումը և միջազգային չափանիշների համադրելիությունը, մատչելիության և հավասարության բարձրացումը:

2005 թվականին մասնագիտական կրթության ոլորտում առաջնահերթ է դիտվում հասարակական կյանքի տարբեր բնագավառների համար, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, աշխատանքային շուկայի արդի պահանջների բավարարմանը նպատակաուղղված կրտսեր մասնագետների և արհեստագործների պատրաստումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը, անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացման պահանջմունքների բավարարումը, ինչպես նաև՝ ՀՀ աշխատանքային շուկայի արդի պահանջների բավարարմանը նպատակաուղղված միջին և նախնական մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստումը:

2005 թվականին նախատեսվում է մշակել և հաստատել միջին և նախնական մասնագիտական կրթության 8-10 մասնագիտության չափորոշիչ, ինչպես նաև շարունակել ԲՈՒՀ-ական մասնագիտությունների չափորոշիչների մշակման գործընթացը :

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձը 2005 թվականին կբարձրացվի 15 տոկոսով, իսկ հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժների և վարչական աշխատողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացումը կկատարվի հանրակրթության համակարգում իրականացվող բարձրացումների ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև 20 տոկոսով կբարձրացվի սննդի հաշվարկային նորմատիվը:

Առողջապահություն

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես կարևորագույն խնդիրներից մեկը:

Առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում որդեգրվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված հետևյալ հիմնարար արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, առողջության պահպանման գործում կառավարության և անհատների նոր դերի սահմանում, այդ գործընթացում պատասխանատվության տարանջատում, ստվե-

րային գործունեության վերացում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում և, հնարավորության դեպքում, լրացուցիչ միջոցների ընդգրկում:

Կարևորելով ՀՀ բնակչության առողջության պահպանումը և այն դիտարկելով որպես գերակայություն՝ անհրաժեշտ է առողջապահական իրավիճակի վերլուծական և հանրապետության տնտեսական ներուժի (այդ թվում՝ պետական բյուջեի) նպատակային և արդյունավետ օգտագործման հիմքի վրա բնակչության առողջության պահպանմանն ու բարելամանն ուղղված հստակ քաղաքականության ձևավորումը և իրականացումը:

Առողջապահության ոլորտի զարգացման դինամիկ քաղաքականության ապահովման նպատակով կարևորագույն հիմնախնդիր է դիտվում բնագավառի օրենսդրական դաշտի բարելավումը: Այդ նպատակով առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը հիմնականում կանոնակարգող «Առողջապահության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, այդ թվում՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ, բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականության գերակայող ուղղություններն են.

- բնակչությանը մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը,
- բնակչության հիգիենիկ-հակահամաճարակային անվտանգության ապահովումը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը,
- մոր և մանկան առողջության ապահովումը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,
- սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը,
- բժշկական օգնության որակի բարելավումը,
- դեղորայքային ապահովումը,
- տեղեկատվական համակարգի կատարելագործումը,

- պետական ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման ու ֆինանսական այլ հոսքերի արդյունավետ կառավարման ապահովումը:

Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական ավելացման պայմաններում առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ոլորտում առկա ֆինանսական հոսքերի կանոնակարգումը և բուժօգնության որակի ու մատչելիության բարձրացումը:

Ելնելով այն իրողությունից, որ առողջապահության համակարգում գործող բուժիմնարկներն իրենց թվաքանակով, հզորություններով, կադրային ներուժով զգալիորեն գերազանցում են (այդ թվում՝ պետության կողմից երաշխավորված ծրագրերով ձևավորված) պահանջարկը՝ առաջիկա տարիներին կշարունակվի 2001 թվականին սկսված առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացի խորացումը:

Առկա ռեսուրսների առավել նպատակաուղղված և արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է արմատավորել և ընդլայնել պետական պատվերի տեղադրումը ընտրանքային եղանակով:

2000 թվականից սկսած՝ ներդրվում է ընտանեկան բժշկության համակարգը, որն աստիճանաբար կփոխարինի գոյություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համեմատաբար ուռճացած համակարգին: Առաջիկա տարիներից կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության քաղաքականությունը:

Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա: Աղքատների համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

Հատուկ նշանակություն է դարձվելու գյուղական մակարդակում բուժօգնության առաջնային համակարգի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է արդեն սկսված գյուղական ամբուլատորիաների վերանորոգումն ու ժամանակակից սարքավորումներով վերազինումը:

Կանանց և երեխաների առողջության պահպանմանը, այդ թվում՝ վերարտադրողական առողջության համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու, հետևաբար՝ բնակչության առողջական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման տեսանկյունից: Այդ նպատակով անհրաժեշտ է վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը ազգային մակարդակով՝ ապահովելով հղիների, կերակրող մայրերի և 0-5 տարեկան երեխաների սնուցման շարունակական բարելավումը, կրծքով սնուցման խրախուսումը, հղիների նախածննդյան խնամքի և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը:

Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Շարունակական գործընթացի համատեքստում առողջապահության բյուջեի սոցիալական ուղղվածության բնորոշումը կապահովի երկրում չքավորության աստիճանը որոշող հատուկ համակարգի ներդրմամբ պայմանավորված բուժօգնության հասցեագրված ֆինանսավորման իրականացումը:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը լինելու է դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացումը: Սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլյոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդներին դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համարյա բոլոր բուժ կազմակերպություններում (հատկապես մարզերում) տասնյակ տարիներ օգտագործվող բժշկական տեխնիկան ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության, ինչը խիստ բացասական է անդրադառնում բուժական պրոցեսի կազմակերպման վրա:

Բուժ կազմակերպությունների բժշկական սարքավորումների վերազինման, բուժտեխնիկայով հագեցվածության, բուժական և ախտորոշման գործընթացի բարձրացման նպատակով նախատեսվում է բժշկական ժամակակից սարքավորումների ձեռքբերում (կենտրոնացված միջոցներով), որոնք հավասարաչափ կբաշխվեն մարզերում գործող թե ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի, թե հիվանդանոցային համակարգի բոլոր բուժհաստատությունների միջև:

Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

Սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն

Սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտում 2005 թվականին հիմնական գաղափարախոսությունը լինելու է սոցիալական հիմնահարցերի լուծումը՝ տնտեսության զարգացման միջոցով ապահովելով սոցիալապես խոցելի բնակչության առավել արդյունավետ պաշտպանությունը և սոցիալական աջակցության մատչելիությունը:

Սոցիալական ապահովության և ապահովագրության ոլորտում քաղաքականության իրականացման գործընթացում կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես կշարունակվեն աշխատանքները Աշխատանքի Միջազգային կազմակերպության ընդունած

կոնվենցիաներին միանալու և Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի պահանջները ապահովելու ուղղությամբ:

Աշխատանքի բնագավառում առաջնահերթ օրենսդրական կարգավորման են ենթակա պետություն-գործատու-աշխատուժ հարաբերությունները: Աշխատանքային օրենսգրքի ընդունումից հետո նախատեսվում է մշակել վերջինիս կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, ինչպես նաև «Աշխատանքի պետական տեսչության մասին», «Դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության մասին» օրինագծերը:

Աշխատավարձի քաղաքականության բնագավառում նախատեսվում է մշակել հետևյալ օրինագծերը.

- «Քաղաքացիական աշխատանք կատարողների վարձատրության մասին»,
- «Համայնքային ծառայողների վարձատրության մասին»,
- «Զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց ֆինանսական ապահովման և դրամական բավարարման մասին»:
- Աշխատաշուկայի մոնիտորինգի արդյունքներով կներկայացվի քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մասին գեկույցը:

Զբաղվածության բնագավառում կշարունակվեն տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության կարգավորման, աշխատաշուկայում լարվածության մեղմացման, ինչպես նաև «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքերից սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները:

Նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ պայմանավորված միջոցառումների իրականացումը՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքների մասին» կարգի մշակման ուղղությամբ:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում կշարունակվեն բարեփոխումները հետևյալ ուղղություններով.

- սոցիալական ապահովության քարտերի և սոցիալական ապահովության քարտերի համարների կիրառում,
- անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի ներդրման և կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի կատարելագործում, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարողների կողմից անհատականացված հաշվետվությունների ներկայացման համակարգերի ներդրում,
- կենսաթոշակային ապահովագրության համակարգի օրենսդրական դաշտի կատարելագործում:

Կենսաթոշակների չափերը կշարունակվեն բարձրացվել ինչպես ի հաշիվ հիմնական կենսաթոշակի, այնպես էլ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի, ինչով կբարձրանան նաև հաշմանդամության և սոցիալական կենսաթոշակների չափերը:

Նախատեսվում է 2005 թվականից կիրառել սոցիալական ապահովության քարտերի համակարգը՝ պետական կառավարման մարմինների միջև տվյալների փոխանակությունն իրականացնելով սոցիալական քարտի համարի միջոցով: Վերջինս հնարավորություն կընձեռնի ունենալ հավաստի տեղեկատվություն՝ բարձրացնելով սոցիալական պաշտպանության ծրագրերի հասցեականությունը:

Սոցիալական բարեփոխումների իրականացման գործընթացում անհատական (անձնավորված) հաշվառման և անհատականացված հաշվետվությունների համակարգերի օրենսդրական դաշտի ստեղծումը կնպաստի սոցիալական վճարումներ կատարողների թվաքանակի մեծացմանը և սովերային տնտեսության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը՝ հիմք նախապատրաստելով կենսաթոշակային ապահովագրության կուտակային սկզբունքի ներդրման և ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների միջոցով լրացուցիչ սոցիալական ապահովության երաշխիքների ապահովման համար:

Այս համակարգերի ներդրումը հնարավորություն կտա հստակորեն հաշվառել ապահովագրվածների իրավունքներն իրացնելու համար անհրաժեշտ պայմանները (յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի չափը, գործատուի և վարձու աշխատողի կողմից կատարված սոցիալական վճարումների չափը, ապահովագրական ստաժի տևողությունը և այլն) և կենսաթոշակ նշանակել անհատական հաշվում արտացոլվող տվյալների հիման վրա:

Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում քաղաքացիական ծառայողների կենսաթոշակային ապահովության համակարգի ներդրման համար կիրականացվեն անհրաժեշտ օրենսդրական աշխատանքներ:

Կշարունակվեն կենսաթոշակային ապահովության համակարգի 3-րդ բաղկացուցչի՝ կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրման աշխատանքները:

Օրենսդրորեն կկարգավորվեն պարտադիր սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերի (ժամանակավոր անաշխատունակություն, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, թաղման նպաստ) արդյունավետ իրականացումը:

Կամփոփվի կենսաթոշակային ապահովության ոլորտի ռազմավարությունով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը և կնախանշվեն ոլորտի հետագա զարգացման ուղղությունները:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում կշարունակվի թվով 8 մանկատների 935 առանց ծնողական խնամքի մանացած երեխաների շուրջօրյա խնամքը՝ բարելավելով նրանց դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանները՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Այդ նպատակով կհաստատվեն Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության հարցերով զբաղվող հաստատությունների տեսակները, ինչպես նաև կմշակվեն յուրաքանչյուր տեսակի հաստատությունների համար ընդունելության չափանիշները:

2005 թվականին կշարունակվեն «Մանկատների բեռնաթափման» փորձնական և «Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրերը, որը հնարավորություն կտա ապահովելու մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, մասնագիտական կողմնորոշումը և ուսուցումը, հասարակության մեջ նրանց առավել լիարժեք ինտեգրումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

Առանձնակի ուշադրություն կդարձվի հանրապետությունում երեխաների և կանանց վիճակի բարելավմանը: Կիրականացվեն «Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N17-Ն որոշմամբ և «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N645-Ն որոշմամբ 2005 թվականին նախատեսված միջոցառումները:

Շարունակվելու է «Երեխաների բարեկեցություն ազգային ռազմավարություն» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Երևանի Աջափնյակ համայնքում և Գյումրի քաղաքում երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծումը փողոցում հայտնված՝ թափառաշրջիկ և մուրացիկ, ինչպես նաև խիստ կարիքավոր ընտանիքների երեխաների խնամքի, կրթության և դաստիարակության ապահովման նպատակով՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի լուծման համար կարևորվում է ՀՀ Ազգային Ժողովում գտնվող Ընտանեկան օրենսգրքի ընդունումը և դրանից բխող իրավական ակտերի մշակումը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում շարունակվելու են գործող օրենսդրության կատարելագործման աշխատանքները, որոնք կնպաստեն հետևյալ հիմնական գործառույթների իրականացմանը.

- բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում,
- հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնում և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժում ու վերականգնում,
- հաշմանդամների պրոթեզավորում, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում (7170 հաշմանդամ կստանան պրոթեզաօրթոպեդիկ օգնություն և կապահովվեն վերականգնողական պարագաներով),
- տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկումը. (ստացիոնար պայմաններում՝ համակարգի 4 տուն-ինտերնատներում, խնամվում են շուրջ 970 ծերեր ու հաշմանդամներ, որոնք գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո, իսկ տնային պայմաններում Երևան քաղաքում սպասարկվում է 1200 միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացի),
- «ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական

օգնության տրամադրում» ծրագրի շրջանակներում 2005 թվականին նախատեսվում է զինհաշմանդամներին տրամադրվող ամենամսյա դրամական օգնությունն ավելացնել 2000 դրամով:

2005 թվականին նախատեսվում է փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում՝ այն համապատասխանեցնելով ՄԱԿ-ի կողմից ընդունված «Հաշմանդամների հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններին»:

Շարունակվելու է նաև բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով, «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի համաձայն, արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկեր տրամադրելու գործընթացը:

Սոցիալական աջակցության բնագավառում խնդիրները պայմանավորված կլինեն հանրապետությունում աղքատության պատկերի փոփոխմամբ:

2004 թվականի ՀՀ պետական բյուջեով աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության համար նախատեսվել է 16,093 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 26 %-ով:

2004 թվականին բարձրացավ աղքատության ընտանեկան նպաստի միջին չափը, որը պայմանավորվեց աղքատության ընտանեկան նպաստի բազային մասի ավելացմամբ, երեխաներին տրվող հավելման չափի բարձրացմամբ: Ընդ որում առաջին անգամ տարբերակվեց աղքատության ընտանեկան նպաստի չափը՝ ելնելով տվյալ ընտանիքի անապահովության աստիճանից: Հաշվի առնելով տնային տնտեսությունների բյուջեների ուսումնասիրության այն տվյալները, որ ամենախոցելի սոցիալական խումբը երեխաներն են, 2002-2003 թվականներին արվել են առաջին քայլերը նպաստի համար նախատեսված գումարն առավելապես երեխաներին ուղղելու համար, որն արտահայտվել է աղքատության նպաստի նշանակման ժամանակ նպաստի իրավունք ունեցող ընտանիքի միայն անչափահաս երեխաների համար հավելում սահմանելով:

Հարազատ մնալով կառավարության որդեգրած այդ քաղաքականությանը՝ աղքատության ընտանեկան նպաստի չափի տարբերակման մեջ ուշադրության կենտրոնում գտնվեցին երեխաները և առավել աղքատ նպաստի իրավունք ունեցող երեխաների հավելումը սահմանվեց 3000 դրամ, իսկ մյուսներինը՝ 2500 դրամ:

Համակարգում հաշվառված 216,0 հազար ընտանիքից շուրջ 169,0 հազ. ընտանիք ստանում են աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն, որից նպաստառու են շուրջ 135 հազարը: Նպաստառու ընտանիքներում երեխաների թիվը կազմում է 210 հազար, որից 92 հազարը ստանում են 3000 դրամ հավելում:

Աղքատության ընտանեկան նպաստի չափի հաշվարկման բանաձևի այս փոփոխությունը բերում է տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության մեծացման և պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործման:

2005 թվականի ընթացքում սոցիալական աջակցության բնագավառի քաղաքականության էական փոփոխություններ չեն նախատեսվում, «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքների ընդունումից հետո ՀՀ կառավարությունը կընդունի դրանց կիրառումն ապահովող որոշումները:

Բնակչության միգրացիայի և փախստականների ոլորտում շարունակվելու է հասարակության մեջ փախստականների ինտեգրման գործընթացը՝ որպես դրա վերջնական փուլ համարելով նրանց կողմից ՀՀ քաղաքացիության ընդունումը: Այդ ճանապարհին առկա խնդիրներից իր սրությամբ առանձնանում է բնակարանային հիմնահարցը, որի լուծման համար 2005 թվականին մշակվելու է Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող փախստականների բնակարանային ապահովության ծրագիր:

Ծրագրի իրականացման համար կօգտագործվեն ինչպես պետական բյուջեի, այնպես էլ միջազգային կազմակերպությունների և դոնոր կառավարությունների ֆինանսական հնարավորությունները: Արդյունքում բնակարանի առաջնահերթ կարիքավոր (ժամանակավոր կացարաններում և վազոնտնակներում բնակվող) փախստական ընտանիքները առաջիկա 2,5-3 տարիների ընթացքում կապահովվեն մշտական օթևանով:

ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքային գործունեության կանոնակարգումը կհանդիսանա ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը և կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու դրան կազմակերպված բնույթ հաղորդելու համար: Այդ նպատակով աշխատանքներ են տարվելու համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծման և արտագնա աշխատանքների հարցերով միջպետական համաձայնագրերի կնքման ուղղությամբ՝ նպատակ ունենալով օտարերկրյա պետություններում աշխատանքային գործունեություն ծավալող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Կշարունակվեն բնակչության տեղաշարժերի ուղղությունների և ծավալների հաշվառման միասնական համակարգի ստեղծման գործընթացները, որի արդյունքում հնարավորություն կընձեռնվի գնահատելու միգրացիոն իրավիճակը և մշակելու միգրացիոն առանձին հոսքերի բացասական ազդեցությունը կանխարգելող միջոցառումներ:

Օրենսդրորեն կկարգավորվեն ՀՀ քաղաքացիների Հայաստանից ելքի և Հայաստան մուտքի հետ կապված հարաբերությունները:

Կառավարությունն իր ուշադրության կենտրոնում կպահի անօրինական միգրացիայի ծավալների կրճատման հիմնախնդիրը, որի համար բնակչության շրջանում կծավալվի լայն քարոզչություն, կկնքվեն վերադարձի վերաբերյալ միջպետական համաձայնագրեր, ինչպես նաև կմշակվեն և կիրականացվեն վերադարձող անձանց վերաինտեգրմանն ուղղված նպատակային ծրագրեր:

Օրենսդրական դաշտի կատարելագործմամբ և համապատասխան ծրագրերի մշակմամբ ու իրականացմամբ հետևողական պայքար կտարվի մարդկանց ապօրինի փոխադրումների և առևտրի (թրաֆիքինգ) դեմ:

Աշխատանքներ կտարվեն ներքին տեղահանված անձանց իրենց բնակավայրեր վերադարձի կազմակերպման և դրանցում ամրագրման ուղղությամբ՝ վերաբնակեցման վայրերում նրանց համար ապահովելով անհրաժեշտ պայմաններ: Այդ նպատակով կմշակվեն և կիրականացվեն համապատասխան ծրագրեր՝ դրանց ֆինանսավորմանը մասնակից դարձնելով նաև միջազգային դոնոր կազմակերպությունների:

Կարևորելով ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմամշակութային, լեզվական, գիտական արժեքների պահպանումը, նրանց իրավունքների իրացման համար պետական վերաբերմունքի անհրաժեշտությունը՝ կամբողջականացվի բնագավառի օրենսդրական դաշտը, ինչպես նաև գործադիր իշխանության համակարգում կստեղծվի ազգային փոքրամասնությունների հիմնահարցերով զբաղվող ստորաբաժանում:

Ելնելով բազմակողմ միջպետական համաձայնագրերով ստանձնած պարտավորություններից՝ ՀՀ-ում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիներին կտրամադրվեն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում ամրագրված երաշխիքները: Շարունակվելու է միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության կատարելագործումը:

Մշակույթ

2005 թվականին մշակույթի ոլորտում նախատեսվում է ապահովել մշակութային ժառանգության՝ պատմամշակութային արժեքների, թանգարանային, գրադարանային, արխիվային, կինո, ֆոտո, ֆոնո հավաքածուների պահպանման, համալրման, հանրահռչակման, ինչպես նաև հայ արվեստի զարգացմանն ու տարածմանը, ազգային փոքրամասնությունների, սոցիալ-մշակութային զարգացմանն ուղղված ծրագրերի իրագործումը, նպաստել անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի դրսևորմանը:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում հատուկ ուշադրություն կդարձվի աղքատների ինքնամեկուսացման կանխմանը, մշակութային կյանքին նրանց մասնակցության բարձրացմանը և մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու մատչելիության ապահովմանը, ազգային մշակույթի ինտեգրմանը համաշխարհային գործընթացներին, մշակութային փոխանակությունների նոր ձևերի և ուղղությունների յուրացմանը:

Ոլորտում բարեփոխումներն ուղղված կլինեն մշակութային կազմակերպությունների կառավարման ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործմանը, որոնց համար հիմք կհանդիսանան մշակույթի պահպանման, տարածման հայեցակարգային հիմնադրույթները, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և մշակութային գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերը:

Ֆիզիկական կուլտուրաի և սպորտի բնագավառում, նոր սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններում նախատեսվում է.

- ոլորտի բնականոն գործունեությունն ապահովող իրավական նորմատիվ ակտերի մշակում,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական քաղաքականության կատարելագործումը,

- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, առողջ ապրելակերպի ձևավորման և ակտիվ հանգստի կազմակերպումը,
- հաշմանդամների և մտավոր թույլ զարգացում ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու նպաստավոր պայմանների ստեղծումը,
- ֆիզիկական կուլտուրայի և մարզական հանրապետական միջոցառումների անցկացումը,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստմանն աջակցումը,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների լայն օգտագործում մատաղ սերնդի համակողմանի և ներդաշնակ դաստիարակության գործում, հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայի դասավանդման մակարդակի բարձրացում,
- օլիմպիական շարժման գաղափարների տարածումը ՀՀ-ում,
- հայ մարզիկների տեխնիկա-տակտիկական, սպորտային վարպետության բարձրացման և հետագա կատարելագործմանն ապահովում,
- միջազգային ասպարեզում հանրապետության մարզական վարկանիշի ապահովում,
- զինակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորումը, Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և ՀՀ զինված ուժերում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակումը:

Ոլորտում բարեփոխումներն ուղղված կլինեն մարզակառույցների նպատակային օգտագործմանն ու շահագործմանը, մարզական միջոցառումների անվտանգ անցկացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը, որոնց համար հիմք կհանդիսանան «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին, ՀՀ օրենքը և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը:

Տնտեսական քաղաքականություն

ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականությունը 2005թ. նպատակաուղղված է լինելու Հայաստանի կայուն տնտեսական զարգացմանն ապահովմանը, ձեռք բերված տնտեսական աճի բարձր տեմպերի և մակրոտնտեսական կայունության շարունակական պահպանմանն ու իրականացվող քաղաքականության սոցիալական ուղղվածության խորացմանը: Նշված նպատակների իրականացման երաշխիք կհանդիսանա նաև մշակվող Հայաստանի կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը, որով կնախանշվեն զարգացման հիմնական ուղղությունները և գերակայությունները:

Այս տեսանկյունից առաջնահերթ իրականացվելիք միջոցառումներն են.

- տնտեսության մեջ ներդրումների ծավալների (առավելապես՝ ուղղակի) ավելացմանն ապահովումը, հատկապես ուղղորդված դեպի նյութական արտադրության ոլորտ ու արտադրական

ենթակառուցվածքներ, արտահանման կողմնորոշում ունեցող և բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղեր,

- տնտեսության մրցունակության շարունակական բարձրացումը, հատկապես համեմատական մրցակցային առավելությունների օգտագործմամբ,
- ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ տեմպերի ապահովումը, ընդ որում արտահանման կառուցվածքում գիտատար ապրանքատեսակների մասնաբաժնի զգալի մեծացմամբ,
- մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսների առավելագույն կենտրոնացումը գիտական ներուժի զարգացման և տնտեսության մեջ նորամուծությունների արդյունավետ կիրառման ապահովման նպատակով,
- տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման համաչափության ապահովումը,
- փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության ապահովումը, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնումը ՀՀ մարզերում:

Արդյունաբերական քաղաքականության բնագավառում 2005թ. արդյունաբերական համալիրի զարգացման քաղաքականությունը կնպատակաուղղվի ոլորտի որպես երկրի տնտեսական և քաղաքական անվտանգությունն ապահովող կարևոր գործոնի դերի և նշանակության վերականգնմանն ու ամրապնդմանը: Այդ գործընթացներին կնպաստեն դեպի նյութական արտադրության ոլորտ տեղական և օտարերկրյա ներդրումների ուղղորդումը, առանձին ճյուղերի և ընկերությունների արտադրական ներուժի արդյունավետ ու լիարժեք օգտագործումը, ներհանրապետական և միջպետական արտադրական կոոպերացիայի զարգացումն ու խորացումը:

Մեքենաշինության ճյուղերում կշարունակվեն ընկերությունների գործունեությանը օժանդակող աշխատանքներ, որոնք կներառեն նոր տեխնոլոգիաների և բարձրորակ ու մրցունակ արտադրատեսակների ներդրման, իրացման շուկաների որոնմանն ու ընդլայնման, ինչպես նաև մի շարք կազմակերպչական միջոցառումներ:

Շարունակական զարգացում կունենա քիմիական արդյունաբերությունը, որի հիմնական խնդիրն է հանդիսանալու միջանկյալ և կիսահումք արտադրող առկա հզորությունների օգտագործմամբ նոր նյութերի արտադրությունը, իսկ քլորոպրենային կաուչուկների և լատեքսների հիման վրա, տեղական բնական լցանյութերի կիրառմամբ՝ ռետինատեխնիկական և այլ արտադրատեսակների արտադրությունների կազմակերպումը:

Նկատի ունենալով քիմիական արտադրանքի սպառման շուկայի առանձնահատկությունները՝ կիրականացվեն միջոցառումներ արտաքին շուկաներում ամրապնդվելու, հատկապես ԱՊՀ երկրներում մենաշնորհային դիրք ունեցող բարձրորակ արտադրատեսակների թողարկման ապահովման ուղղությամբ:

Հաշվի առնելով զգալի ներուժը՝ ժամանակակից արտադրական հզորությունների առկայությունը և մասնագիտական բարձր մակարդակը, թեթև արդյունաբերության զարգացումը նախատեսվում է իրակա-

նացնել հեռանկար ունեցող և վերարտադրվող բնական ռեսուրսների վրա /կաշի, բուրդ, մետաքսաթել, բամբակ/ հիմնված արտադրատեսակների թողարկմամբ:

Հանքարդյունաբերության ոլորտի հիմնական խնդիրներն են հանդիսանալու առկա հզորությունների արդյունավետ և լիարժեք օգտագործումը, արտադրության` հատկապես վերջնական մետաղական արտադրանքի ծավալների ընդլայնումը, նոր հանքավայրերի շահագործումը, օտարերկրյա ներդրումների ներգրավմամբ արտադրությունների արդիականացումն ու շահութաբերության բարձրացումը:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից ընդերքի ռացիոնալ օգտագործմանը և ոլորտի զարգացման խոչընդոտների վերացմանը կնպաստակաուղղվի ՀՀ կոնցեսիոն գործակալության գործառույթների իրականացումը, որոնցից լիցենզային պայմանագրերի կնքումը կարևոր լծակ կհանդիսանա ներկայումս անօրինական հանքաշահագործում իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին իրավական, մասնավորապես հարկային դաշտ բերելու գործում:

Շարունակական զարգացում կունենան ակնագործության, ոսկեգործության և այլ ոլորտներում վերջին տարիներին ձեռք բերված հաջողությունները:

Ներդրումների ներգրավման խրախուսման քաղաքականությունը, որը հանդիսանում է վերջին տարիներին վարվող տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը, կնպաստակաուղղվի ներդրումների պաշտպանության խնդիրներին` հնարավորինս պարզեցնել և հստակեցնել պետական կառույցների հետ ներդրողների շփումները, նվազեցնել վարչարարական խոչընդոտները, ապահովել օտարերկրյա և տեղական ներդրումները կարգավորող օրենսդրության հստակ և համահավասար դաշտ:

Դեպի արտադրական ենթակառուցվածքներ և նյութական արտադրության ոլորտ ներդրումների ուղղորդմանը լուրջ խթան կհանդիսանա լիզինգային գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումը, որի նպատակով պաշտոնական շրջանառության մեջ է դրվել օրենքի նախագիծ:

Ներդրումային գործունեության ռիսկերն որոշակիորեն նվազեցնելու նպատակով կիրականացվեն միջոցառումներ միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական համակարգի ձևավորման ուղղությամբ:

Կշարունակվի Հայաստանի և ներդրումային ոլորտում գործընկեր երկրների միջև «Ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» բարենպաստ համաձայնագրերի կնքման գործընթացը:

Վարչարարական խոչընդոտների վերացման և ներդրումային գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտի բարելավմանը կծառայի նաև իրականացված «Հայաստանում օտարերկրյա ներդրումների վարչական խոչընդոտների ուսումնասիրությունը», որը կոչված է գնահատելու գործարար միջավայրը և բացահայտելու օտարերկրյա ներդրումների համար վարչական խոչընդոտների վերացման ուղղությամբ դեռևս անհրաժեշտ միջոցառումների շրջանակը:

Գիտություն և գիտատեխնիկական բնագավառում Հայաստանի առջև ծառայած ամենաարդիական խնդիրներից է հանրապետության գիտական ներուժը տնտեսական զարգացման նպատակներին

ծառայեցնելու, նորամուծական գործունեության, գիտատեխնիկական և տեխնոլոգիական գործընթացների դերի ու հեռանկարի հստակ գիտակցումը և դրա հիման վրա մարդկային, ֆինանսական ու նյութատեխնիկական ռեսուրսների ուղղորդումը: Սա այն կարևորագույն ուղղությունն է, որը պետք է ամրագրվի որպես պետության ռազմավարական նպատակ և իրագործվի ինչպես 2005 թվականին, այնպես էլ հետագա տարիներին:

Նորամուծական գործունեության ակտիվացման համար վճռական նշանակություն կունենա ճյուղավորված նորամուծական ենթակառուցվածքի ստեղծումը: Այդ նպատակին է ուղղված «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ «Անդրոն ԿԷԳ-ՀԻ» ՓԲԸ բազայի վրա ձևավորվող Հայաստանում առաջին տեխնոպարկերից մեկը, որտեղ միավորվել են կենսատեխնոլոգիական, միկրոկենսաբանական, կենցաղային քիմիայի, և փայտամշակման մի քանի ընկերություններ, ինչպես նաև համակարգի առավել նորամուծական ուղղվածություն ունեցող վեց ինստիտուտների մասնակցությամբ հիմնադրված «Transfer technology» հասարակական կազմակերպությունը: Այս ուղղությունը, որի հիմքում դրված է գործող և տեխնիկապես հագեցած գիտատեխնիկական կազմակերպությունների հիման վրա տեխնոպարկերի ու բիզնես ինկուբատորների ստեղծումը և որը Հայաստանում նորամուծական գործունեության նոր տեխնոլոգիաների արագ ու ոչ ծախսատար արտադրության ու ներդրման ամենաիրատեսական հնարավորությունն է, որը կշարունակվի նաև 2005 թվականին:

Գիտության նվաճումները տնտեսության մեջ ներդնելու նշված մեխանիզմների շնորհիվ տնտեսության մրցունակության ու անվտանգության, երկրի պաշտպանունակության բարձրացման ուղղությամբ քայլեր կատարելու նպատակին կծառայի մշակվող Հայաստանի Հանրապետությունում նորամուծական գործունեության հայեցակարգը, որում ամրագրված սկզբունքների վրա կձևավորվի նորամուծական ազգային համակարգը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառը շարունակում է հանդիսասանալ տնտեսության զարգացման կարևորագույն գործոններից մեկը, ինչի մասին վկայում է հանրապետության համախառն ներքին արդյունքի արտադրությունում ՓՄՁ սուբյեկտների կողմից ավելի քան 38%-ի ապահովումը: Այս դրական միտումը կշարունակվի նաև 2005 թվականին, որի ընթացքում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման և պետական աջակցության հիմնական ուղղություններն են լինելու.

- ՓՄՁ սուբյեկտների աջակցության ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը՝ Հայաստանի ՓՄՁ Չարգացման Ազգային Կենտրոնի մարզային նոր մասնաճյուղերի հիմնադրումը Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև գործող մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացումը:
- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների բարելավումը՝ վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շարունակման և ընդլայնման միջոցով: ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը:

- ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող ապրանքների, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջխաղացմանն ուղղված աջակցությունը:
- ՓՄՁ սուբյեկտների գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը:
- Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակումը և իրականացումը:

Արտաքին տնտեսական քննազավառի 2005 թվականի հիմնական ուղղություն է հանդիսանալու համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի մասնաբաժնի հնարավոր ավելացումը և վերջին տարիներին ձեռք բերված դրական արդյունքների ամրապնդումը՝ միջազգային տնտեսական կառույցներում հանրապետության դերի բարձրացման և ինտեգրման գործընթացների աշխուժացման, արտահանման խթանման ու արտահանվող արտադրատեսակների և ծառայությունների ծավալների, անվանացանկի և աշխարհագրության ընդլայնման, ներգրավվող ներդրումների ծավալների ավելացման, հայրենական արտադրողի շահերը պաշտպանելու միջոցով:

Առևտրատնտեսական կապերի հետագա ամրապնդման և զարգացման գործընթացում կարևոր նշանակություն կունենա քննարկման փուլում գտնվող «Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցչությունների և առևտրական ներկայացուցիչների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումը կավարտի համակարգի նորմատիվաիրավական դաշտի ամբողջական համալրումը և թույլ կտա ԱՄՆ-ում և Եվրոմիության երկրներում ունենալ լիարժեք ՀՀ առևտրական ներկայացուցիչներ:

Նոր տնտեսական կապերի ստեղծմանը կծառայի «ԷՔՍՊՈ 2005» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը, որտեղ կներկայացվեն՝ պետության դիրքորոշումը և տեղը համաշխարհային ինտեգրման համակարգում, մշակույթը, պատմությունը, տնտեսական և մտավոր ներուժը:

Առավել կրնդլայնվի Հայաստանի Հանրապետության Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը անդամակցությամբ ընձեռնված հնարավորությունների օգտագործումը՝ առաջնային ուշադրություն դարձնելով ընդունած պարտավորությունների կատարմանը, ԱՀԿ համաձայնագրերի դրույթների պահանջներին ՀՀ իրավական ակտերի նախագծերի համապատասխանեցմանը, ինչպես նաև համաձայնագրերով ամրագրված ծանուցումների նկատմամբ գործող պահանջների կատարման ապահովմանը:

Կարևոր նշանակություն կունենա նաև ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ նշանակելու հարցը, որի արդյունքում ԱՀԿ-ի հետ համագործակցությունը նոր որակ կստանա և առավելագույնս կնպաստի վերոնշյալ աշխատանքների պատշաճ և օպերատիվ իրականացմանը:

Ճյուղային և տարածքային տնտեսական զարգացման քննազավառում ՀՀ մարզերի և տնտեսության ճյուղերի ներուժի ուսումնասիրության հիման վրա մշակվել և քննարկման փուլում է գտնվում «ՀՀ տարածքային տնտեսական զարգացման ռազմավարությունը», որի ընդունումը թույլ կտա 2005թ. ընթացքում մշակել ռազմավարական ուղղություններից բխող միջոցառումների ցանկը: Այն նախատեսելու է ինչ-

պես առանձին տարածքների համալիր ծրագրերի, այնպես էլ ճյուղային նպատակային ծրագրերի մշակումը և իրագործումը:

Աշխատատեղերի ստեղծման և ինքնագբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով 2005թ. նախատեսվում է իրականացնել արհեստագործության զարգացման և ոլորտի պետական աջակցությանն ուղղված միջոցառումներ: Ոլորտի զարգացումը կնպաստի ազգային մշակութային արժեքների, արհեստագործական ավանդական տեխնոլոգիաների և հմտությունների պահպանմանը: Ոլորտի զարգացումը կնպաստի նաև արտահանման ծավալների մեծացմանը և զբաղաբերության զարգացմանը:

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման քննազավառում 2005 թվականի զարգացումը կհիմնվի 2004թ. ընդունված երեք առանցքային՝ «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքների ու դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի պահանջների վրա:

Բյուջետային ֆինանսավորում պահանջող, նախատեսվող միջոցառումները մասնավորապես կնեռարեն.

- առաջնահերթ տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման ամենամյա ծրագրում նախատեսված ազգային ստանդարտների ու դասակարգիչների մշակում,
- մարդասիրական օգնության առաքելությամբ ստացվող ապրանքների սերտիֆիկացման աշխատանքների իրականացում,
- 2006թ. համար նախարարությունների և գերատեսչությունների պետական գնումների նախապատրաստմանն ուղղված աշխատանքներ,
- պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների վերահսկողության նպատակով պետական փորձարկումների իրականացում,
- ազգային էտալոնների ստեղծում (ձեռք բերում), կատարելագործում, պահպանում, սպասարկում,
- պետական չափագիտական վերահսկողության աշխատանքների կազմակերպում:

2005թ. կշարունակվեն տնտեսվարող սուբյեկտներում նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների, համապատասխանության հավաստման կանոնների և չափագիտական նորմերի պահպանման պետական վերահսկողության աշխատանքները, որոնք ուղղված կլինեն՝

- տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրանքի և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին համապատասխանության ապահովմանը, խախտումների կանխարգելմանը և վերացմանը,
- չափումների միասնականության ապահովմանը, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված չափագիտական կանոնների ու նորմերի պահպանմանը, խախտումների բացահայտմանը և դրանց կանխարգելմանը,

- ստուգաչափման համար կիրառվող չափման միջոցների, այդ թվում՝ էտալոնների և աշխատանքային չափման միջոցների վիճակի ու կիրառման ճշտության որոշմանը:

Ներքին շուկայի պաշտպանության եւ սպառողական շուկայի բնագավառում 2005թ. ներքին շուկայի պաշտպանության գործում հիմնական ուղղություններից մեկը կհանդիսանա ներքին արտադրողների /տնտեսության ճյուղերի/ պաշտպանությունը: Այդ նպատակով կշարունակվի ներքին շուկայի պաշտպանության, հակագնացման և փոխհատուցման օրենսդրության կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման և ընդունման գործընթացը, ինչը հնարավորություն կընձեռնի անհրաժեշտության դեպքում համարժեք քայլեր ձեռնարկել Հայաստանի Հանրապետության տարածք աճող ծավալներով կամ գնագցված ապրանքների ներմուծումն ղեկավարելու:

Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 2005թ. կարևոր ուղղություններից մեկը կլինի նաև մրցակցային միջավայրի հետագա բարելավումը, մասնավորապես մրցակցության օրենսդրության կատարելագործման միջոցով:

Սպառողական շուկայի կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումները հիմնականում ուղղված կլինեն առևտրի և բնակչությանը մատուցվող ծառայությունների բնագավառում առկա հիմնախնդիրների լուծմանը և սպառողների իրավունքների պաշտպանությանը:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, առավել ուշադրություն է դարձվելու նշված և «Սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխող իրավական ակտերի ընդունմանը և նորմատիվային դաշտի ձևավորմանը, ոլորտում վերահսկողական գործառնությունների հստակեցմանը, առևտրի և ծառայությունների որակի բարելավմանը և առաջավոր ձևերի կիրառմանը:

Չբոսաշրջությունը, լինելով համաշխարհային տնտեսության առաջատար ոլորտներից մեկը, Հայաստանում իր առաջընթացով առավել դիմամիկ զարգացող ճյուղերից է, ինչը փաստում է 2003թ. և 2004թ. անցած ժամանակահատվածում: 2004թ. առանձնանում է ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորմամբ և կատարելագործմամբ: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ոլորտի գործունեությունը կանոնակարգող մի շարք կարևոր իրավական ակտեր:

Կարևորության աստիճանով ոլորտը ներառվել է այնպիսի գլոբալ համակարգերում, ինչպիսիք են կայուն զարգացումը (շրջակա միջավայրի պահպանություն, համայնքների համաշափ զարգացում և այլն), մշակութային արժեքների փոխադարձ արժևորման և մարդկային զարգացման տարաբնույթ համակարգերը: Ինդուստրիան ամբողջությամբ ընդգրկված է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում և աշխատուժի առումով մարդկային ռեսուրսի սոցիալապես խոցելի այնպիսի խավեր է ներառում, ինչպիսիք են երիտասարդներն ու կանայք:

2005 թվականին ծրագրային առաջնային քայլերը ուղղված կլինեն՝

- զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի և վիճակագրական հաշվետվության համակարգի հետագա կատարելագործմանը,
- ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացմանը,

- իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, օտարերկրյա պետությունների հետ զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջազգային պայմանագրերի մշակմանը և կնքմանը,
- Համաշխարհային Ջրոսաշրջային Կազմակերպության հետ համագործակցության ամրապնդմանը ու ակտիվացմանը,
- «Մեծ Մետաքսե Ճանապարհ» զբոսաշրջային ծրագրի շրջանակներում միացյալ տարածաշրջանային համագործակցության իրականացմանը,
- զբոսաշրջության ոլորտի գովազդա-տեղեկատվական ապահովման համակարգի ընդլայնմանը և կատարելագործմանը:

Գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2005թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի ագրոպարենային ոլորտի հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար:

Նախատեսվում է 2005 թվականին շարունակել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավափոխհարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում.
- մասնավորեցման գործընթացի արագացում և համակարգում մասնավոր հատվածի գերակշռության ապահովում.
- տեղական արտադրողների շահերի պաշտպանության ու հակամենաշնորհային քաղաքականության իրականացման միջոցով տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում.
- տարածաշրջանային և գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում.
- կառուցվածքային և ֆունկցիոնալ վերափոխումների իրականացում և կրթական, տեղեկատվական ու խորհրդատվական ծառայությունների ուժեղացում.
- գիտահետազոտական աշխատանքների ընդլայնում, նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2005 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերը կնպատակաուղղվեն գերակայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացմանը.

- աղակալած հողերի աղագերծման միջոցով հողերի մելիորատիվ վիճակի բարելավում.
- տոհմա-սելեկցիոն և սերմնաբուծական աշխատանքների բարելավում, տոհմային գործի կազմակերպում, արհեստական սերմնավորման միջոցառումներ.
- գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման գործընթացի ապահովում.
- բույսերի պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ.
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և ագրարային կանոններին համապատասխան ֆիտոսանիտարական և անասնաբուժական-հակահամաճարակային տեսչական վերահսկողության ապահովում.
- անտառային տնտեսության պահպանման և անտառների վերականգնման համալիր միջոցառումների իրականացում.
- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում.
- գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին աջակցություն, գյուղատնտեսական ծառայությունների զարգացման ծրագրերի իրականացում.
- սահմանային հսկիչ կետերի կառուցում և վերազինում.
- հակակարկտային սարքավորումների ձեռքբերման գործընթացում պետության ստանձնած պարտավորությունների կատարում.
- Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում ձևավորված գործընկերային ֆոնդի հաշվին իրականացվող հակահեղեղային և անտառվերականգնման միջոցառումների իրականացում:

Ագրոպարենային համակարգի զարգացման 2005 թվականի քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ, կմնա երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հանրապետության ագրարային հատվածում կոոպերացիայի զարգացման նպատակով աջակցություն կցուցաբերվի գյուղացիական միավորումների և կոոպերատիվների ձևավորմանը, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ագրարային ոլորտում պետական քաղաքականության նպատակներն ու գերակայությունները համահունչ են Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի (ԱՀՌԾ) հիմնախնդիրներին և դրանց լուծմանն ուղղված գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրի իրականացմանը: Դրանք անհրաժեշտ նախադրյալներ կստեղծեն գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման համար՝ գյուղատնտեսությունում առկա հողային, նյութատեխնիկական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների

առավել արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսության վարման արդյունավետ եղանակների կիրառման, գյուղատնտեսական մթերքների իրացման ու արտահանման խնդիրների լուծման ու գյուղատնտեսության մեջ ապրանքայնության մակարդակի բարձրացման, գյուղատնտեսական գործունեության վարկավորման և նյութատեխնիկական ու ֆինանսական աջակցության հիման վրա:

Իրականացվող ագրարային քաղաքականության և ներդրումային ծրագրերի կենսագործման արդյունքում 2005 թվականին կապահովվի գյուղատնտեսության համախառն արտադրանքի շուրջ 6.0 % աճ: Միաժամանակ 2005 թվականին կանխատեսվում է գյուղատնտեսական մթերքների գների ինդեքսի 3.0 տոկոս տարեկան աճ: Այս զարգացումները որոշակիորեն կնպաստի պարենային ապահովության խնդրի լուծմանը:

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացը շարունակելով, 2005 թվականին, ինչպես նաև ելնելով պետական գույքի մասնավորեցման մասին օրենքներով սահմանված քաղաքականության հիմնական նպատակներից ու խնդիրներից, կշարունակվեն այդ գործընթացների կատարելագործման աշխատանքները, որոնք ուղղված կլինեն սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

Ելնելով պետական գույքի մասնավորեցման սահմանված նպատակներից, ինչպես նաև այդ գործընթացի բարելավման և արագացման անհրաժեշտությունից, կկարևորվի մասնավորեցման գործընթացը կարգավորող օրենսդրության կատարելագործման միջոցառումների հիմնավորումը:

Պետական գույքի մասնավորեցման քաղաքականության հիմնական նպատակ համարելով տնտեսության զարգացման և տնտեսական աճի տեմպերի ավելացման ապահովումն՝ այն պետք է խթան դառնա հանրապետությունում կուտակված խնայողությունները, ինչպես նաև օտարերկրյա ներդրումները տնտեսության տարբեր ճյուղերում ներդնելու և դրանով իսկ տնտեսությունը գրավիչ դարձնելու ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Ելնելով վերոնշյալից՝ պետական գույքի մասնավորեցման ձևերից նախապատվություն կտրվի աճուրդով և մրցույթով մասնավորեցմանը, ինչը հնարավորություն կտա ուշադրությունն առավելագույնս կենտրոնացնել ներկայացվող ներդրումային ծրագրերի արժանահավատության և հիմնավորվածության գնահատմանը: Այս կապակցությամբ մեծ ուշադրություն կդարձվի պետական գույքի մասնավորեցման պայմանագրերում ներդրումային և սոցիալական երաշխիքների պարտավորությունների ամրագրմանը և դրանց կատարման վերահսկմանը:

Մասնավորեցման գործընթացի արդյունավետության հիմնական երաշխիքներից մեկը կհամարվի այդ գործընթացի լիարժեք թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Այդ գործընթացի իրականացման այս կամ այն մոտեցման ընտրությունը պայմանավորված կլինի բացառապես տնտեսական արդյունավետությամբ:

Ճյուղային ենթակառուցվածքների գծով մասնավորեցման նպատակը կլինի հետմասնավորեցման արդյունքների արդյունավետության ապահովումը, և այս իմաստով նախապատվություն կտրվի ներդրումների ներգրավմամբ մասնավորեցման հայտերին և գործարար ծրագրերի առկայությանը:

Պետական բաժնեմասի կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը կհամարվի մինչմասնավորեցման փուլում պետական մասնակցությամբ

առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության նվազման միտումների վերլուծությունը, գնահատումը և դրա կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Նշվածը կիրառործվի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի համատարած և ընտրանքային պարբերական դիտարկումների (մոնիտորինգի) միջոցով՝ կառավարության կողմից սահմանված կարգով: Պետական գույքի կառավարման գործընթացը պետք է համահունչ լինի տնտեսության տարբեր ոլորտներում պետական բաժնեմասի օպտիմալացման ընդունված հայեցակարգերի և ռազմավարության հետ:

Մասնավորեցվող իրավաբանական անձանց հետ միասին, հողամասերի մասնավորեցման (օտարման) կառավարության կողմից սահմանված սկզբունքների համաձայն, կշարունակվեն արդյունաբերական հողերի տնտեսական շրջանառությունը խթանող միջոցառումների մշակման ու ներդրման աշխատանքները:

Պետական գույքի կառավարման միասնական քաղաքականության իրականացումն ու մասնավորեցման (օտարման) դաշտի արդյունավետության բարձրացումն ապահովելու նպատակով կշարունակվեն սեփականության իրավունքների գրանցման և պետական գույքի հաշվառման համակարգի ստեղծման ու կատարելագործման աշխատանքները:

Անշարժ գույքի կադաստրի 2005 թվականի զարգացման հիմնական ուղղություններն ու գերակայություններն են լինելու.

ա) ՀՀ տարածքում անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի ներդրումը և դրա արդյունավետ կառավարման ապահովումը, այդ թվում.

- ՀՀ տարածքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում, անշարժ գույքի վերաբերյալ գրանցված իրավունքների և սահմանափակումների, որակական և քանակական տվյալների միասնական տեղեկատվական համակարգի ներդրում և կառավարում. անշարժ գույքի կադաստրի 47 տարածքային ստորաբաժանումներում և տեղեկատվական կենտրոնում ներդրվելու է անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգ և ապահովվելու է արտաքին օգտագործողներին դրա հասանելիությունը:
- Շուկայական մեխանիզմների վրա հիմնված՝ հարկման նպատակով գնահատման նոր համակարգի ներդրում և գնահատման աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացում:

- Անշարժ գույքի շուկայի զարգացմանն աջակցում:

բ) Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացումը, այդ թվում.

- Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրայի, թեմատիկ) թվային ֆոնդի ստեղծում՝ հիմնված նորագույն տեխնոլոգիաների վրա:
- Արբանյակային, օդային և վերգետնյա հանույթային տեխնոլոգիաների հիման վրա ֆոտոգրամետրիկ մեթոդների ներդրում:

- Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման ավտոմատացված համակարգի ներդրում:

- Արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային և բարձունքային ցանցի արդիականացում:

գ) Հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը, այդ թվում.

- ՀՀ վարչատարածքային նոր բաժանման, պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպում և իրականացում:
- Հողային ռեսուրսների կառավարման, հողերի օգտագործման արդյունավետության բարձրացում:
- Հողերի միավորման ծրագրերի կազմակերպում և աջակցում:
- Պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործում, հողի շուկայի ձևավորման աջակցություն:

Բնապահպանություն

2005 թվականին կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը ուղղված կլինի բնական պաշարների վերականգնելիությունը և բնական օգտագործումը ապահովող համակարգի հետագա զարգացմանը, կատարելագործմանը և արդիականացմանը: Քաղաքականության իրականացումն ապահովող աշխատանքները և միջոցառումները բաժանված կլինեն հետևյալ հիմնական ուղղությունների միջև.

Սևանա լճի համալիր և Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերի շրջանակներում 2005 թվականին իրականացվելու են այդ ծրագրերով նախատեսված համապատասխան միջոցառումները, այդ թվում`

- «Ձկան պաշարների համալրման գծով պետական պատվեր» ծրագրի իրականացում,
- Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների բնագավառում 2005 թվականին բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան» և «Դիլիջան» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, դենդրոպարկեր և այլն) պահպանությանը, խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը: Բացի նշված ծրագրերից, 2005 թվականին ավարտվելու են բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծմանը նպատակաուղղված ներքոհիշյալ ծրագրերի կատարումը`

- «Ձերմուկ» ազգային պարկի ստեղծման ծրագրի մշակում,

- «Կիրանց» բնական պարկի ստեղծման ծրագրի մշակում,
- «Արփի» ազգային պարկի ստեղծում :
- «Որոտան» բնական պարկի ստեղծում :
Շարունակվելու է՝
- բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրի ստեղծումը,
- տեխնիկական աջակցությունը «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներին,
- բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման և ցանկի հաստատման ծրագրի մշակման գծով պետական պատվերները,
- բնության հատուկ պահպանվող տարածքների («Խոսրովի անտառ» պետական արգելոց) վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքները,
- լքված հանքավայրերի պաշարների գույքագրում:
Բացի նշվածներից, 2005 թվականին իրականացվելու են նաև ներքոհիշյալ նոր աշխատանքները՝
- Շիրակի մարզում արգելավայրերի ստեղծման ծրագրի մշակում,
- «Արևիկ» պետական արգելոցի ստեղծման ծրագրի մշակում:

Վերը նշված երկու ոլորտների գծով շարունակվելու է Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային ծրագրի իրականացումը՝ նպատակաուղղված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով նախատեսված անտառային ռեսուրսների կառավարման համակարգի ամրապնդմանը, զարգացման բնապահպանական խոչընդոտների կանխարգելմանը:

Բնապահպանական նպատակային ծրագրերի շրջանակներում 2005 թվականին նախատեսված է ապահովել Աղքատության հաղթահարման ռազմավարական և հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրերով նախատեսված բնապահպանության և բնօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործմանը, բնապահպանական ստանդարտների և նորմատիվների համակարգի ձևավորմանը նպատակաուղղված միջոցառումների ու այլ ծրագրերի իրականացումը, այդ թվում՝

- «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման գծով պետական պատվեր,
- Աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման ներդրման մեխանիզմի մշակում,
- Բնապահպանության ոլորտի տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքների գծով պետական պատվեր,
- Վնասակար նյութերի արտանետումների աղբյուրների և քանակների քարտեզագրում:

Հիդրոօդերևութաբանության բնագավառում աշխատանքները նպատակաուղղվելու են.

- միջազգային չափանիշներին համապատասխանող օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտիմոնետրիական, օզոնամետրիական և ատրոլոգիական դիտարկումների կատարմանը,
- կլիմայի փոփոխության ուսումնասիրության և կլիմայի մոնիտորինգի իրականացմանը,
- հանրապետության տարածքում ռադիացիոն մոնիտորինգի կատարմանը,
- կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների կատարմանը,
- հիդրոօդերևութաբանական տվյալների հավաքագրմանը, կանխատեսումների և վտանգավոր աղետային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների կազմմանը,
- հանրապետության ղեկավար մարմիններին, զինված ուժերին, ավիացիային, տնտեսավարող սուբյեկտներին, գյուղատնտեսությանը, էներգետիկային, տրանսպորտին և այլ շահագրգիռ կազմակերպություններին հիդրոօդերևութաբանական, ռադիացիոն և հելիոտերկրաֆիզիկական տարբեր տեղեկատվությամբ ապահովմանը:

Շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառում աշխատանքները նպատակաուղղվելու են շրջակա միջավայրի վիճակի և նրա վրա վնասակար ներգործությունների մոնիտորինգի ազգային համակարգի ձևավորմանը:

Մոնիտորինգի ավանդական բնագավառների ամրապնդման և զարգացման հետ մեկտեղ, հատուկ ուշադրություն է դարձվելու ներկայումս այդ աշխատանքների շրջանակներից դուրս մնացած բնագավառների՝ ընդերքի, հողերի, ստորերկրյա ջրերի, կենդանական և բուսական աշխարհի, անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների և օբյեկտների, ընդհանուր առմամբ՝ կենսոլորտի ու նրա բաղադրիչների, գյուղատնտեսական մշակաբույսերի ու կենդանիների, նյութերի, շենքերի և մարդածին այլ օբյեկտների վրա վնասակար տեխնածին և այլ վնասակար ներգործության ու դրա հետևանքների մոնիտորինգի ստեղծմանն ու զարգացմանը, նպատակ ունենալով՝ ապահովել հանրապետության էկոլոգիական անվտանգության և կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվական հենքի ստեղծում:

Ընդերքի ուսումնասիրության ոլորտի գծով կատարվող երկրաբանական ուսումնասիրությունները նպատակաուղղվելու են Հանրապետության տարածքում օգտակար հանածոների նոր երևակումների հայտնաբերմանը և երկրաբանական մի շարք կարևոր հիմնահարցերի պարզաբանմանը նպատակաուղղված երկրաբանական, հիդրոտերկրաբանական ու երկրաֆիզիկական ուսումնասիրություններին և քարտեզագրմանը:

Ենթակառուցվածքներ

Էներգետիկ համակարգում իրականացվող պետական քաղաքականության նշանակետում պահպանվելու է ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ նվազագույն ծախսերով

Էներգահամակարգի զարգացման խթանումը՝ անվտանգության, էներգամատակարարման հուսալիության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի գործունեությունն ուղղված է լինելու հանրապետության էներգետիկ պահանջարկի բավարարմանը, էներգետիկական անկախության ներկա մակարդակի առնվազն պահպանմանը, այդ թվում՝ ներկրվող (բնական գազ, միջուկային վառելիք, մագուիթ՝ որպես ռազմավարական պաշար) և տեղական էներգետիկ պաշարների (հիդրո, հողմային, արևի և այլն) տարատեսականագմամբ և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործման ապահովմամբ:

Վճռորոշ փուլ են թևակոխելու հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման և նոր գազիֆիկացման աշխատանքները: Այդ աշխատանքների իրականացման երաշխիք են հանդիսանալու ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության համար հաստատվող տարեկան ներդրումային ծրագրերը:

Էներգահամակարգի ֆինանսական առողջացման և համակարգի արդյունավետ կենսագործունեության առումով 2005 թվականին շրջադարձային և վճռորոշ կղառնա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունների միջև էլեկտրաէներգիայի առուվաճառքի իրականացումն ուղիղ պայմանագրերի հիման վրա: Արտադրող-բաշխող առուվաճառքի ուղիղ պայմանագրերի ներդրումը կնպաստի էներգահամակարգում ֆինանսական հոսքերի կարգավորմանը՝ շուկային բնորոշ կանոններով:

ՀՀ կառավարության 6 նոյեմբերի 2003 թվականի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003-2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003-2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 1694-Ն որոշման պահանջներին համապատասխան կշարունակվի էներգետիկ համակարգի պետական ընկերությունների ֆինանսական առողջացման գործընթացը:

Էլեկտրաէներգետիկական Շուկայի կանոնների մշակմամբ ու ներդրմամբ առավել կհստակեցվեն Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող Համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի գործառույթները, կկանոնակարգվեն դրանց և էներգահամակարգում տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունները, որը կնպաստի Շուկայի գործունեության թափանցիկության ավելացմանը: Թափանցիկության ապահովման տեսակետից կարևորվում է նաև պետական բաժնեմասային մասնակցությամբ ընկերություններում կորպորատիվ կառավարման գործուն համակարգի ներդրման ու գործունեության կանոնակարգման գործընթացը:

Իրադարձությունների նման զարգացումը նույնպես կնպաստի էներգետիկայի բնագավառի աստիճանական ֆինանսական առողջացմանը:

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվելիք վարկային միջոցների հաշվին կշարունակվեն հետևյալ ծրագրերը. «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր»՝ Ճապոնիայի

կառավարություն և Համաշխարհային բանկ, «Էլեկտրաէներգիայի հաղորդման սեկտորի վերականգնում. «Ալավերդի-2» ենթակայանի վերագինում»՝ Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկ:

Սեփական միջոցների, ԱՄՆ-ի էներգետիկայի դեպարտամենտի և Եվրահամայնքի կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

Ելնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունից 2005 թվականին նախատեսվում են հանրապետության վառելիքամատակարարման ուղիների զանազանեցման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները՝ Իրան-Հայաստան գազամուղի Մեդրի-Քաջարան հատվածի կառուցման մեկնարկում, մասնավոր կապիտալի ներգրավմամբ՝ ՀԷԿ-երի կառուցման աշխատանքների իրականացում, Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի շարունակական բարձրացում, Պուշկինի լեռնանցքում 2,6 ՄՎտ հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցում, ԻԻՀ հետ համատեղ Արաքս գետի հիդրոներուժի օտագործում, Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնում, տարածաշրջանային համագործակցության ընդլայնում և խորացում և այլն:

Առաջնային ծրագրերից է նաև Երևանի ՁԷԿ-ում ժամանակակից գազատուրբինային ագրեգատի տեղադրումը, որի ուղղությամբ տարվում են գործնական աշխատանքներ ու բանակցություններ Դնապոնիայի կառավարության հետ և այն հաջողությամբ ավարտվելու դեպքում այս ծրագիրը կընդգրկվի զարգացման ընդհանրական փաստաթղթում:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կողմից հատկացվող ֆինանսական միջոցների հաշվին կիրականացվեն էներգետիկայի բնագավառի անվտանգության, տեխնիկական, բնապահպանման և տնտեսական արդյունավետության կանոնակարգերի մշակման աշխատանքներ, դրանց կիրառման ապահովման մեխանիզմներ ու ինստիտուցիոնալ հիմնական միջոցառումներ՝ միջազգային փորձին համապատասխանեցնելու նպատակով:

Ջերմամատակարարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջերմամատակարարման ռազմավարությանն համապատասխան, 2005 թվականին կշարունակվեն համակարգի վերականգնման աշխատանքները: Այդ աշխատանքների արդյունքում իրենց լուծումը կստանան մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ, որոնցից են՝ ջերմամատակարարման ծառայությունների առևտրայնացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի զարգացումը, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների վերջնական ընտրությունը:

Գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման աշխատանքներում նոր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կընձեռի արագացնել դրանց տեմպերը:

Ջրային տնտեսության բնագավառում իրականացվող մեծածավալ աշխատանքների բնականոն ընթացքը և հետագա զարգացումն ապահովելու գործընթացում ընթացիկ տարին կարևորվում է կառա-

վարության կողմից իրականացվող հստակ և հետևողական միջոցառումների շարունակումը, դրանց ամրապնդումը և իրացումը:

Առաջիկա տարիներին շարունակվելու են ջրային համակարգում կառուցվածքային բարեփոխումներին ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք համահունչ են ՀՀ ջրային պաշարների և ջրային տնտեսության կառավարման բարեփոխումների 2002թ. ընդունված հայեցակարգին: Կառուցվածքային բարեփոխումները հիմնականում ուղղված են ջրավազանային կառավարման սկզբունքների վրա ջրային համակարգերի կառավարման բարելավմանը, ընկերությունների կառավարման ինքնուրույնության բարձրացմանը, վերջիններիս կառավարման մեջ մասնավոր սեկտորի ու համայնքային մարմինների ներգրավմանը: Մասնավորապես.

ա/ Համաձայն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի Հայաստանի Հանրապետությունում ոռոգման համակարգերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով իրականացվում են կառուցվածքային բարեփոխումներ՝ ջրավազանային սկզբունքով և ինքնակազմակերպման ու ոչ պետական կարգավիճակով ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) ստեղծման և ոռոգման համակարգերը (ներառյալ ներտնտեսային ցանցերը) վերջիններիս տիրապետման ու օգտագործման հանձնման գործընթացների ուղղությամբ՝ պահպանելով դրանց պետական սեփականությունը:

2003-2004թթ. ստեղծվել են 53 ՋՕԸ-ներ (այդ թվում 2003թ. ստեղծվել է 18 ՋՕԸ-ներ, իսկ 2004թ.՝ մնացած 35 ՋՕԸ-ները) և վերջիններիս ֆրավարար ֆինանսատնտեսական գործունեության ապահովման նպատակով ՀՀ կառավարության կողմից ՀՀ 2003-2004թթ. պետական բյուջեներից ոռոգման համակարգի ընկերությունների համար նախատեսված սուբսիդիայից կատարվել են մասհանումներ:

բ/ ՀՀ կառավարության և Գերմանիայի Գաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» վարկային ծրագրերով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Շիրակ» և «Լոռի» մասնաձյուղերի բազայի վրա արդեն իսկ ստեղծվել են 51% պետական բաժնեմաս ունեցող «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունները: Հատկանշական է, որ ինչպես «Նոր Ակունք» ՓԲԸ դեպքում, այնպես էլ վերջիններիս կառավարմանը մասնակցելու են նաև համապատասխան համայնքները (49% բաժնեմասով):

Բացի այդ, հաշվի առնելով Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունում մասնավոր կառավարչի ներգրավման փորձը, նախատեսվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համակարգի կառավարումը ևս փոխանցել միջազգային մրցույթով ընտրված կառավարչի: Այդ կապակցությամբ «Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» վարկային ծրագրի շրջանակներում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար մասնավոր կառավարչի ներգրավման ուղղությամբ հայտարարված միջազգային մրցույթի արդյունքում, որպես մասնավոր կառավարիչ, ներգրավվել է ֆրանսիական «ՍԱՈԻՐ» ընկերությունը, որն իր գործունեությունը կսկսի 2004թ. վերջերին:

զ/ «Համայնքային զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում նոր կառավարման պայմանագրի ստորագրման միջոցով Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ընկերությունում նախատեսվում է առավել խորացված արձատարվորել մասնավոր կառավարչի ինստիտուտը: Մասնավոր կառավարչի ներգրավումը նախատեսվում է իրականացնել վարձակալության սկզբունքով՝ առանց ջրային համակարգերի սեփականության իրավունքի փոխանցման: Այդ գործընթացը ենթադրվում է ավարտել 2005թ. երկրորդ կեսին:

Միաժամանակ, նախատեսվում է շարունակել ջրային համակարգերի վերականգնմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը (այդ թվում ներդրումային)՝ առաջնային համարելով ոչ էներգատար, ինքնահոս համակարգերի զարգացման խնդիրը, ինչպես նաև բնակչությանը հուսալի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովումը: Մասնավորապես, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ ջրային տնտեսության բնագավառում իրականացվելու են ներդրումային և կառավարման բարելավումների ծրագրերը:

Ջրային տնտեսության համակարգում նախատեսվող կառուցվածքային և կառավարման բարեփոխումների, ինչպես նաև կատարվող ներդրումների արդյունքում մասնավորապես ակնկալվում է.

1. Ապահովել ծախսերի օպտիմալացում, ջրի անտնտեսվար օգտագործման նվազեցում.

- Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ընկերությունում 2004թ. փաստացի կանխատեսվող ցուցանիշի դիմաց կորուստների նվազում մոտ 7 տոկոսային կետով, Էլեկտրաէներգիայի ծախսի կրճատում մոտ 28%-ով և 24 ժամյա ջրամատակարարման ապահովում՝ մինչև 95%,
- «Հայջրնուղկոյուղի» ընկերությունում 2004թ. փաստացի կանխատեսվող ցուցանիշի դիմաց կորուստների նվազում մոտ 12 տոկոսային կետով և Էլեկտրաէներգիայի ծախսի կրճատում մոտ 8%-ով:

2. Հաշվառման համակարգի բարելավում.

- Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ընկերության մասով ջրաղբյուրներում ամբողջությամբ տեղադրվել են ջրաչափական սարքեր, իսկ բազմաբնակարան շենքերի մուտքագծերին և բնակիչ-բաժանորդների մոտ ջրաչափական սարքերը տեղադրվել են 85 %-ով: Այդ գործընթացը նախատեսվում է շարունակել 2005թ. ընթացքում:
- «Հայջրնուղկոյուղի» ընկերության մասով դեռևս նոր է նախատեսվում ապահովել ջրի չափման տեխնիկական միջոցների ներդրումը: Ներկայումս ջրաչափեր տեղադրված են բաժանորդների մոտ 28 %-ի մոտ: Այդ ուղղությամբ հիմնական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2005թ. ընթացքում, որին կնպաստի նաև մասնավոր կառավարչի ներգրավումը:

Վերոհիշյալ բոլոր միջոցառումները (այդ թվում կառավարման և կառուցվածքային բարեփոխումներ, ջրային համակարգերի վերականգնմանն ու զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում) չնայած պետք է հիմք հանդիսանան ջրամատակարարման բավարար որակի ապահովման և աղտոտման ռիսկի նվազեցման համար, սակայն միայն վերջիններիս իրականացումը բավարար չէ նախանշված արդյունքների ապահովման համար: Պետության կողմից այդ ընկերություններում առաջացող բոլոր ֆինանսական հիմնախնդիրների լուծումը միայն պետական բյուջեի հաշվին պարունակում է ինչպես սպառողների,

այնպես էլ ընկերությունների կողմից չարաշահումների և անտնտեսվարության առարկայական վտանգ: Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում որդեգրել այնպիսի մոտեցում, ըստ որի ընթացիկ շահագործման ամբողջ ծախսերն աստիճանաբար ներառվեն սակագներում, իսկ պետությունը գլխավորապես ապահովի համակարգերի զարգացմանն ու կառավարման բարելավմանն ուղղված կապիտալ ծախսերը և տարեց-տարի կրճատի ընթացիկ ճեղքվածքների սուբսիդավորումը:

2003-2005թթ. ընթացքում պայմանական ամսական վճարի համակարգից անցում է կատարվում ջրաչափական համակարգով հաշվառվող ծավալային համակարգին և շահագործման հաստատուն ծախսերի դիմաց զգալիորեն նվազում է սպառողների կողմից պահանջվող ջրաքանակը (Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության մասով սպառողին տրված ջրաքանակը գործող սակագնով սահմանված 81,5 մլն խ.մ. դիմաց կանխատեսվում է 68 մլն խ.մ., իսկ «Հայջրմուղկոյուղի» ընկերության մասով սպառողին տրված ջրաքանակը գործող սակագնով սահմանված 45 մլն խ.մ. դիմաց 2005թ. կանխատեսվում է 31 մլն խ.մ.):

Անհրաժեշտ է նշել նաև, որ մինչ այժմ սակագնային մեծություններում չեն ներառված առանձին ծախսային հոդվածներ (մասնավորապես՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի գծով՝ վարձակալական վճարը, հողի հարկը, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գծով՝ ջրամբարների պահակային ծառայության վճարը և այլն):

Միաժամանակ, չնայած «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքից «Շիրակ» և «Լոռի» մասնաճյուղերի առանձնացմանը, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մոտ էլեկտրաէներգիայի ծախսի էական նվազում չի նախատեսվում, քանի որ այդ տարածքներում ջրամատակարարումը հիմնականում իրականացվում էր ինքնահոս եղանակով: Վերջինս կհանգեցնի մատուցված ծառայության միավորի հաշվով էլեկտրաէներգիայի ծախսի, հետևաբար նաև սակագնի 45 %-ով ավելացման:

Այս պարագայում ենթադրվում է, որ գործող սակագներում փոփոխություններ կատարելու նպատակով, ջրային ոլորտի ընկերությունները պետք է համապատասխան հայտեր ներկայացնեն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանճնաժողով: Ընդ որում, համաձայն ՀՀ կառավարության գնահատումների, մատուցված ծառայության ինքնարժեքը Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ մասով չի կարող պակաս լինել 150 դրամ/խ.մ.-ից, իսկ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով, հաշվի առնելով, որ նոր վարկային ծրագրի արդյունքում դեռևս նոր պետք է իրականացվեն հիմնական աշխատանքները, նպատակահարմար է գտնվել 2005թ. դեռևս ծախսերն ամբողջ ծավալով չընդգրկել սակագնի մեջ և այն առաջարկել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի համար նախատեսվող սակագնի չափով:

Ոռոգման ոլորտի ընկերությունները (ՋՕԸ-ները) թեև ոչ պետական և ինքնակարգավորվող ընկերություններ են, սակայն վերջինների կայացմանն ու կարողությունների ավելացմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունը որդեգրել է շարունակել այդ ընկերությունների ընթացիկ գործունեության սուբսիդավորման քաղաքականությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ջրային տնտեսության ոլորտի ընկերություններին պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաներն ունեն նվազման միտում (2003թ.՝ 7358 մլն դրամ, 2004թ.՝ 6828 մլն դրամ), սակայն 2005 թվականի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում շարունակել խմելու ջրի և ոռոգման

համակարգերը շահագործող ընկերությունների սուբսիդավորումը և ապահովելու նրանց ֆինանսական կենսունակությունը:

Հարկ է նշել, որ «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների մոտ ընթացիկ ճեղքվածքի ծածկման համար ՀՀ 2005թ. պետական բյուջեից լրացուցիչ գումարների (սուբսիդիաների) տրամադրման անհրաժեշտություն չի առաջանում և խնդիրը լուծվելու է վարկային ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես, «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մոտ առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկումը նախատեսվում է իրականացնել վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին, իսկ նոր կազմավորվող «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների գծով նախատեսվում է կանոնադրական կապիտալների համալրում (ընդամենը 51 մլն դրամի չափով), որի միջոցները կօգտագործվեն նաև ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հնարավոր ֆինանսական ճեղքվածքի ծածկման համար:

Բացի նշվածներից 2005թ. իրականացվել են նաև նոր ծրագրեր՝

- կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում,
- գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ:

Տրանսպորտի բնագավառում 2005 թվականին տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) հնարավորությունների ռացիոնալ օգտագործման միջոցով ապահովել ինչպես ներհանրապետական, այնպես էլ արտերկրներ առաջարկվող ամբողջ ծավալով փոխադրումների իրականացմանը, փոխադրումների ինքնարժեքի նվազեցման միջոցով աղքատության կրճատմանը:

Այդ նպատակով 2005 թվականին, պետական բյուջեի միջոցների հաշվին կշարունակվի հանրապետության համար կենսարար և ռազմավարական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման և պահպանման աշխատանքների իրականացումը: Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգումները կիրականացվեն այն ճանապարհահատվածներում, որոնք տարիներ շարունակ շահագործվելով շարքից դուրս են եկել և տրանսպորտային միջոցների համար դարձել դժվար անցանելի և վտանգավոր:

Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 02.07.01թ. թիվ 591 որոշմամբ հաստատված՝ ՀՀ ճանապարհային վթարավտանգ տեխնիկական վիճակում գտնվող կամրջային կառուցվածքների հիմնանորոգման աշխատանքները:

Կավարտվեն 2003 թվականին սկսված Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 18+710 կմ հատվածում գտնվող ուղեանցի հիմնանորոգման աշխատանքները, կիրականացվեն նաև մարզային (տեղական) նշանակության ավտո-ճանապարհահատվածների վրա գտնվող մի շարք կամուրջների հիմնանորոգում:

Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ փոսային նորոգումների և ձմեռային պահպանության, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների աշխատանքների պահպանության իրականացումը տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդարձնի ավելի դյուրին, անվտանգ և նվազ ծախսատար:

«Երկաթուղային տրանսպորտի ոլորտում ՀՀ կառավարությունը որդեգրել է «Հայկական երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը ծրագրային հիմքերի վրա տեղափոխելու քաղաքականություն: Այդ կապակցությամբ մշակվում է Հայկական երկաթուղու հնգամյա զարգացման ծրագիր, որն ուղեցույց կհանդիսանա Ընկերության հետագա տարիների գործունեության զարգացման ու արդիականացման համար:»:

Քաղաքացիական ավիացիայի համակարգի 2005 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները բխում են ՀՀ կառավարության ծրագրերից եւ թռիչքային և ավիացիոն անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

Հիմնախնդիրների մի մասի լուծումը կապված է ավիացիայի բնագավառում ներդրումների ներգրավման, քաղաքացիական ավիացիայի խնդիրների իրականացման համար «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված դրույթները այլ իրավական ակտերին ներդաշնակեցման հետ:

Այսպես, ընդհանուր նշանակության ավիացիայի գործունեության վերականգնումը կամ տարածքային օդանավակայանների վերագործարկումը կապված են ինչպես ֆինանսավորման ապահովման, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծման, այնպես էլ շուկայում վճարունակ պահանջարկի ձևավորման հետ:

Հաշվի առնելով թռիչքների անվտանգության ապահովման հրամայականը ոլորտի գերակա հիմնական ուղղություններ են դիտվում օդանավերի ուղղաձիգ տարանջատման կրճատված մինիմումների ներդրումը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում:

Օդային փոխադրումների շուկայի կարգավորման ուղղությամբ կատարվելիք առաջնային միջոցառումներն են՝

- Հայաստանի Հանրապետության օդային փոխադրումների շուկայում 50 տոկոսից ոչ պակաս չափով հայկական ավիաընկերությունների փոխադրումների ծավալի տեսակարար կշռի ապահովումը,
- «Շիրակ» և «Ստեփանավան» օդանավակայաններից չվերթեր իրականացնող ավիաընկերությունների թվի ավելացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- «Շիրակ» և «Ստեփանավան» օդանավակայաններում օդանավերի բազավորումը և այդ կետերից փոխադրումները խրախուսելու համար համապատասխան ծրագրի մշակումն ու միջոցառումների կատարումը,
- Համատեղ բազավորման օդանավակայաններում ՀՀ օրենսդրության շրջանակներում քաղաքացիական ավիացիայի օդանավերով ավիափոխադրումների կանոնակարգումը:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության կողմից գործող օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու միջոցով կապահովվի փոխադրողների և ուղևորների շահերի պաշտպանությունը, հավասար մրցակցային դաշտի ստեղծումը, որը կնպաստի առողջ շուկայական հարաբերությունների զարգացմանը և ազգաբնակչության աղքատության կրճատմանը:

Սուրհանդակային պետական գործակալության կողմից կապահովվի պետական, դիվանագիտական փոստի փոխանակությունը և գաղտնի փաստաթղթերի ապիով փոխադրումը:

Քաղաքաշինությունը՝ լինելով երկրի տարածքային կազմակերպման և զարգացման, ազգայնակշիռային, արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակավայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ընդգրկում է տարածքային պլանավորման, ճարտարապետության, բնակարանային-կոմունալ տնտեսության, շինարարության և շինհնդուստրիայի, բնական և տեխնածին երևույթներից տարածքի պաշտպանության բնագավառները:

2005 թվականին քաղաքաշինության բնագավառում հանրապետության առանձին տարածաշրջանների մասնագիտացման առանձնահատկությունների բացահայտման, բնակավայրերի կայուն զարգացման, տնտեսության ազատականացման պայմաններում տարածքների նպատակային օգտագործման, Լանդշաֆտների պլանավորման և կառուցապատման կանոնակարգման նոր մոտեցումների ձևավորման նպատակով որպես առաջադրված խնդիրների լուծման անհրաժեշտ նախադրյալ նախատեսվում է շարունակել համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները, մասնավորապես՝ քաղաքաշինական ծրագրային և գոտիավորման փաստաթղթերի կազմումը:

2005 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Հանրապետությունում գործող քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերի համակարգն իր մեջ ներառում է բնակավայրերի հատակագծմանն ու կառուցապատմանը, շենքերի և շինությունների նախագծմանն ու շինարարությանը, ինչպես նաև շինարարական արտադրանքին ներկայացվող պահանջների վերաբերող տեխնիկական նորմեր և ստանդարտներ: Գործող միջազգային պահանջներին և տնտեսական նոր հարաբերություններին դրանք համապատասխանեցնելու, արդիականացման, ինչպես նաև նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի բազան համալրելու նպատակով փաստաթղթերի մշակման աշխատանքները տարվելու են ինչպես հանրապետական, այնպես էլ միջպետական մակարդակով, այդ թվում՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում:

Հանրապետության տարածքում լայն տարածում ունեն սողանքային, սելավային և վտանգավոր այլ երկրաբանական պրոսեցները: Վտանգավոր արտածին երկրաբանական երևույթներից պաշտպանության բնագավառում արդյունավետ և տնտեսապես շահավետ գործողությունները պահանջում են ռազմավարական նոր մոտեցում և հետևողական քաղաքականության իրականացում, որի նպատակով նախարարության կողմից ձեռնարկվել են նշված երևույթների կառավարման համակարգի հայեցակարգային ծրագրի մշակման աշխատանքներ:

Ներկայումս ՀՀ ամբողջ տարածքում, ճապոնական կառավարության կողմից հատկացված դրամաշնորհի և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իրականացվում և մինչև 2006 թվականը իրականացվելու է սողանքային աղետների կառավարման մեխանիզմների մշակման նպատակով «Ոսումնասիրություն» ծրագիրը, որի արդյունքում կառաջարկվի նշված աղետների կառավարման մեխանիզմները, կմշակվի և կտրամադրվի «Գլխավոր պլանը»:

Շինարարության բնագավառում 2005 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագրով նախատեսված և 2004 թվականին արդեն իսկ մշակված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա թվով 153, այդ թվում՝ 12 նորակառույց դպրոցների շինարարության և հիմնանորոգման աշխատանքները:

Նախատեսվում է շարունակել և իրականացնել «Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և նորերի կառուցման համալիր ծրագիր»-ը:

Աղետի գոտու վերականգնման գործընթացի արդյունքում ստեղծված իրավիճակը, հանրապետությունում իրականացվող բարեփոխումների նոր խնդիրներ էին առաջացրել աղետի գոտում շինարարության քաղաքականության ճշգրտման անհրաժեշտության առումով:

Պետական ոլորտի միջամտությամբ և ռեսուրսներով առաջնային էր դարձել բնակարանային, մշակութային, ինժեներական ենթակառուցվածքների խնդիրների լուծման նպատակով նոր տարբերակված մոտեցումներ ցուցաբերել աղետի գոտու քաղաքային և գյուղական բնակավայրերի նկատմամբ:

Երկրաշարժից հետո անցած տարիների ընթացքում աղետի գոտու ժողովրդագրական փոփոխությունները ևս նոր հարցադրումներ էին առաջադրել քանդված կամ վթարված դպրոցների, առողջապահական օբյեկտների նախկին ծավալներով կառուցման նպատակահարմարության առումով:

Ներկայումս հաջողությամբ ընթանում են Աղետի գոտու համալիր ծրագրի իրականացման աշխատանքները և առկա են՝ բոլոր հնարավորությունները 2005 թվականին նախատեսված միջոցառումների հաջող իրականացման համար և աղետի գոտին զարգացման գոտու վերածելու նախադրյալները:

2005թ. բնակարանային ոլորտում շարունակվելու են աշխատանքներ ուղղված ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների ապահովմանը՝ բնական աղետների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման և բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացմանը:

Բնակապահովման ծրագրերի շրջանակներում նախատեսվում է պետական միջամտությամբ հնարավորություն ընձեռել շուրջ 400 ընտանիքների լուծելու իրենց բնակարանային խնդիրները, որոնցից 116-ը՝ ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում ռմբակոծության հետևանքով վնասված, բնակության համար ոչ պիտանի բնակելի տների բնակիչների, 3-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի սողանքային գոտում գտնվող 4-րդ և 3-4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների, 25-ը՝ ՀՀ Վայոց Ձորի Շատին գյուղում քարաթափերի ազդեցության գոտում գտնվող բնակելի տների բնակիչների, 228-ը՝ գյուղական բնակավայրերում 1988թ. երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, 16-ը՝ ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի քանդման ենթակա վթարային բնակելի տան բնակիչների և 11-ը՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում 1968թ. հունիսի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով մարզի Լեռնաձոր գյուղում քանդված բնակելի տների՝ փայտյա տնակներում ժամանակավորապես բնակեցված ընտանիքների:

Բնակապահովման ծրագրերի շրջանակներում պետական միջամտության կարիք ունեցող քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծումը նախատեսվում է անհատական բնակարանային շինարարության

րություն իրականացնելու կամ շուկայից բնակելի տուն ձեռք բերելու համար հասցեագրված պետական անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ աջակցություն ստանալու հավակնողների հիմնավորված ընտրության և նվազագույն ստանդարտներին համապատասխանող բնակտարածությամբ ապահովման մոտեցման կիրառմամբ:

2005 թվականին դիտարկվելու է նաև Գ-յումրի քաղաքում աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում վերականգնման ենթակա տարածքներում տեղակայված տնակներից տեղահանված ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, տնակներում բնակվող բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը՝ բնակարան վարձակալելու համար աջակցության տրամադրման միջոցով:

Բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված աջակցության ծրագրերի շրջանակներում նախատեսվում է աջակցության միջոցով իրականացնել միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն բազմաբնակարան շենքի պահպանման պարտադիր նորմերի կատարման ապահովմանը, բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների կայացմանը և նրանց հզորացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, դրանով իսկ նպաստելով բազմաբնակարան շենքերի պահպանման մակարդակի բարձրացմանը:

Հարկաբյուջետային քաղաքականություն

2005 թվականի հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղվածությունը համահունչ կլինի վերջին տարիներին կառավարության որդեգրած մոտեցումներին՝ ապահովելով կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների շարունակական եւ ադյունավետ իրականացումը՝ պահպանելով և ավելացնելով ոլորտում նկատվող դրական միտումների զարգացումը:

Հարկային քաղաքականությունը 2005 թվականին հիմնականում կրնոթագրվի հարկային օրենսդրության հստակեցմամբ և պարզեցմամբ, ինչպես նաև, հիմնվելով ազատ տնտեսական մրցակցության պայմանների ապահովման սզբունքների վրա, կշարունակվեն ձեռնարկվել քայլեր տարբեր հարկման տարբեր ռեժիմներով հարկվող տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխման ուղղությամբ:

Միջոցառումներ կձեռնարկվեն հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների պետական բյուջեից հետ վերադարձման, ինչպես նաև հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմների օրենսդրական կատարելագործման ուղղությամբ:

Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը կերաշխավորի բյուջետային եկամուտների հավաքելիության բարձր մակարդակի ապահովումը: 2005 թվականին կառավարության կողմից իրականացվելիք հարկային վարչարարության առանցքային ուղղություններից կհանդիսանան չհարկվող (ստվերային) շրջանառությունների կրճատումը, հարկային օրենսդրության պահանջները չկատարողների հանդեպ պատասխանատվության հարկային լծակների արդյունավետ կիրառումը, ինչպես նաև չկատարված հարկային պարտավորությունների գանձելիության մակարդակի բարձրացման ապահովումը:

Հարկային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցառումների կատարելագործումը և լայնածավալ կիրառումը հնարավորություն կընձեռի ապահովել հարկային եկամուտների հավաքագրման կայունությունը:

Վարչարարական մեխանիզմների վերանայման և կատարելագործման արդյունավետ ուղղվածությունը կերաշխավորի հարկերի վճարման կամավորության սկզբունքի արմատավորումը տնտեսական միջավայրում:

Հարկային հանցագործությունների դեմ հետևողական պայքարը կնպաստի տնտեսվարող սուբյեկտների համար սրբակցության հավասար պայմանների ապահովմանը, որը միաժամանակ կնվազեցնի ստվերում գործող կամ հարկերը թերհայտարարագրող արտոնյալ վիճակում գտնվող տնտեսվարող սուբյեկտների ազդեցությունը շուկայի վրա: Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում հարկային օրենսդրության պահանջների խախտումների կանխման, խափանման, այդ խախտումների բացահայտման նպատակով ֆինանսական պատասխանատվության ձևերի կիրառման առաջնահերթությամբ կկիրառվեն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ և կապահովվի դրանց հրապարակայնությունը:

Մաքսային բնագավառում 2005 թվականին կշարունակվի մաքսային բնագավառը կարգավորող օրենսդրության հստակեցումն ու պարզեցումը, մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության ապահովումը՝ կապված Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների պատարման հետ:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից կիրականացվի մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերանայում (հստակեցում, պարզեցում և օպտիմալացում)՝ հաշվի առնելով մաքսային մարմինների միջև ընդհանուր կապի ընձեռած հնարավորությունները:

Առանձնահատուկ տեղ է հատկացվելու ՀՀ մաքսային օրենսգրքով մաքսային մարմիններին վերապահված հետբացթողումային հսկողության իրականացմանը, որը հնարավորություն կընձեռնի մաքսային հսկողության բնագավառում կանխարգելիչ միջոցների ներդրմանը, ինչպես նաև կբարձրացնի մաքսային վճարների հավաքագրման արդյունավետությունը:

Հաշվապահական հաշվառման բնագավառում 2005 թվականին շարունակվելու և խորացվելու են համակարգի բարեփոխումները: Հաշվապահական հաշվառման միջազգային նոր ստանդարտների հիման վրա ընդունվելու և կիրառության մեջ են դրվելու Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման համապատասխան ստանդարտներ, լրանակվելու են գործող առանձին ստանդարտներ: Մշակվելու և ներդրվելու են նաև հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառմանն օժանդակող նոր մեթոդական նյութեր, հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևեր:

Աուդիտորական գործունեության կարգավորման բնագավառում շարունակվելու է բնագավառի զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականությունը, մասնավորապես, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ստեղծման և կատարելագործման ուղղությամբ՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

2005 թվականին հիմնականում կավարտվեն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող իրավական ակտերի ընդունման աշխատանքները և կստեղծվեն անհրաժեշտ նախապայմաններ նշված օրենքի լիարժեք կիրառման համար: Կվերսկավի աուդիտորների որակավորման գործընթացը, էականորեն կբարելավվեն անհատ աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպման և իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Միջոցներ կձեռնարկվեն նաև աուդիտորների վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպման և իրականացման ուղղությամբ, որոնց արդյունքում որոշակիորեն կբարձրանա աուդիտի որակը:

Հաստատվելու և կիրառության մեջ են դրվելու աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտի նոր ստանդարտներ, մշակվելու և գործողության մեջ են դրվելու նաև դրանց կիրառման վերաբերյալ մի շարք հրահանգներ, որոնք ևս պետք է համապատասխանեն աուդիտի միջազգային ստանդարտների կիրառման վերաբերյալ համապատասխան նյութերին:

Գնումների և գանձապետական համակարգերի կատարելագործման ուղղությամբ 2005 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը նախատեսում է ավարտին հասցնել նախկին նախաձեռնված միջոցառումները, ինչպես նաև այդ համակարգերի հետագա կատարելագործման նպատակով ձեռնարկել նոր միջաջառումներ: Մասնավորապես՝

Գնումների բնագավառում նախատեսվում է ավարտել հետևյալ միջաջառումները՝

- Համայնքների կարիքների համար կենտրոնացված գնումների՝ բաց մրցույթների կազմակերպման գործում տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցության ցուցաբերում: Շարունակվելու է 2003 թվականից սկսած տեղական ինքնակառավարման մարմիններին պետական պատվերի շրջանակներում, գնումների պաշտոնական տեղեկագրի մեկական օրինակի անվճար կարգով տրամադրումը:
- Վերապատրաստման ծրագրերի իրականացում: Նախատեսվում է 2005 թվականի ընթացքում պետական մարմինների գնումների գծով մասնագետների վերապատրաստման նպատակով կազմակերպել սեմինար-պարապմունքներ: Միաժամանակ միջոցներ կձեռնարկվեն գնումների գործընթացի պետական կարգավորման և միջնորդային համակարգման համար պատասխանատու պաշտոնատար անձանց գնումների միջազգային փորձի ուսումնասիրման հնարավորություններ ընձեռելու ուղղությամբ.
- Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական հատկանիշները բնութագրող կատալոգների կազմում: Նախատեսվում է կազմել և հրապարակել պարբերական մրցույթներով գնվող հիմնական սպառման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական հատկանիշները բնութագրող կատալոգներ, որոնք անվճար կտրամադրվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

- Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ուղղությամբ միջոցառումների իրականացում: Նախատեսվում է նախապես պատրաստված պետական գնումների ավտոմատացման (Էլեկտրոնային գնումների) համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքի հիման վրա ձեռնարկել միջոցներ Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումների և այլ պարագաների գնման ու մշակման և այդ համակարգի գործունեության ապահովման ուղղությամբ:

Միաժամանակ ՀՀ կառավարությունը շարունակելու է համագործակցությունը միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ, նպատակ ունենալով նաև ապահովել գնումների համակարգի համապատասխանությունը միջազգային կազմակերպությունների նկատմամբ ՀՀ-ի ստանձնած պարտավորություններին:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և գանձապետական համակարգերում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Գանձապետական համակարգի կատարելագործման ուղղությամբ 2005 թվականի ընթացքում կառավարությունը նախատեսում է ավարտին հասցնել նախկինում նախաձեռնված միջոցառումները, ինչպես նաև այդ համակարգերի հետագա կատարելագործման նպատակով ձեռնարկել նոր միջոցառումներ: Մասնավորապես կառավարությունը նախատեսում է շարունակել գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման միջոցառումները: Ծրագիրը ներառում է այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են 2004 թվականին հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումների հիման վրա հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումը՝ ընդ որում ընտրված միջազգային խորհրդատուների աջակցությամբ «GFS-2001»-ի պահանջներին համապատասխան «Կառավարության Ֆինանսների Վիճակագրության» ձեռնարկի հաստատում, հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և ստանդարտների մշակում և հաստատում, ինչպես նաև, միջգերատեսչական էլեկտրոնային վճարումների և բյուջեների՝ էլեկտրոնային համակարգի միջոցով, կատարման միասնական համակարգի ներդրում:

Ներքին աուդիտի համակարգ: 2004 թվականին հաստատված Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացվելու են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի ոլորտում առկա հիմնախնդիրների կարգավորման աշխատանքներ՝ այն հանրային հատվածի ներքին աուդիտի միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես ծրագրի շրջանակներում իրականացվելու են ներքին աուդիտի ռազմավարության իրականացման գործողությունների մանրամասն ծրագրի հաստատում, ներքին աուդիտի գնահատման ստորաբաժանման համար տարեկան գործողությունների ծրագրի մշակում և անցում ներքին աուդիտի գնահատման ստորաբաժանման նոր դերին, ներքին աուդիտորների հավաստագրման ծրագրի հաստա-

տում, ներքին աուդիտի նոր մեթոդների համար փորձնական ծրագրերի իրականացում և դրանց նկատմամբ մոնիտորինգի իրականացում:

Ծրագրային բյուջետավորման համակարգ: ՀՀ պետական հատվածում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումը նախատեսում է, որպեսզի բոլոր պետական մարմինները վերաճակերպեն իրենց ծախսային ծրագրերն այնպիսի սկզբունքներով, որի արդյունքում ունենան ծառայությունների օգտակար համախմբում, ապահովելով ծրագրի իրականացման նպատակով կատարվող բոլոր ծախսերի բաշխումը ծրագրի միջև: Արդյունքում կառավարությանն ավելի արդյունավետ տեղեկատվություն կներկայացվի այն ծառայությունների կամ ուղղակի արդյունքների վերաբերյալ, որոնք տրամադրվելու են բյուջետային գումարների դիմաց: Այս ծրագրի շրջանակներում նախատեսում է համապատասխանեցնել բյուջեների կազմման և բյուջեների կատարման ու հաշվետվությունների գործող համակարգերը, որն ենթադրում է ՀՀ պետական բյուջեի կազմում, կատարում և հաշվետվությունների ներկայացում՝ հիմնվելով արդյունքների վրա:

Այլ ոլորտներ

Ապահովագրական համակարգ

Ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացման ապահովման և կատարելագործման նպատակով՝ 2005 թվականին ապահովագրության բնագավառում առկա ռազմավարական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կշարունակվեն իրականացվել մի շարք միջոցառումներ:

2004թ. հունիսի 11-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները:

Վերոնշյալ օրենքների, մասնավորապես «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումը անհրաժեշտություն է առաջացրել մի շարք ՀՀ կառավարության որոշումների («Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը հաստատելու մասին», «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման և տեղաբաշխման կարգը հաստատելու մասին», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ինչպես նաև ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջները և որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին», «Ապահովագրական վկայագրերի հաշվառման, պահպանման և լիազորված պետական կառավարման մարմին եռամսյակային հաշվետվության ներկայացման կարգը սահմանելու մասին», «Գործակալի գործունեության կանոնակարգի օրինակելի ձևը, դրանում ներառվող պայմանների և առանձնահատկությունների հաստատելու մասին», «Ապահովագրողի

գործունեության գործարար ծրագրի ներկայացման կարգը սահմանելու մասին», «Ապահովագրական գործունեություն իրականացնողիների լիցենզավորման կարգը սահմանելու մասին», «Ապահովագրության յուրաքանչյուր տեսակի գծով կիրառվող ապահովագրական սակագների մասին հաշվետվության ձևը, դրա ներկայացման և սակագների հիմնավորման կարգն ու ժամկետները սահմանելու մասին» և այլն) ընդունման համար, որոնց իրականացումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի օգոստոսի 24-ի թիվ 557-Ա որոշմամբ:

2005 թվականի ընթացքում ապահովագրական ոլորտում շարունակվելու են իրականացվել օրենսդրական դաշտի կարգավորման միջոցառումներ, որոնք մեծապես կնպաստեն ապահովագրական շուկայի պետական վերահսկողության մեխանիզմների կատարելագործմանը, ապահովադիրների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը, ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ամրապնդմանը, և ընդհանրապես կստեղծեն անհրաժեշտ օրենսդրական հիմքերն ու նախապայմանները ՀՀ ապահովագրական համակարգի կայուն զարգացման համար:

Ապահովագրական համակարգի կատարելագործման նպատակով նախատեսվում են իրականացնել նաև մի շարք այլ միջոցառումներ՝ առկա ռազմավարական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես, օրենսդրական դաշտի կարգավորումից հետո՝ պարտադիր ապահովագրության տեսակների ներդրման անհրաժեշտության և առաջնահերթության որոշում և հնարավորության դեպքում դրանց ներդրում, ապահովագրության տարբեր տեսակների (հատկապես հիպոթեքային ապահովագրության) ներդրման ծրագրերի մշակում, ապահովագրական համակարգի ու շուկայի զարգացման գերակայությունների որոշում, կյանքի ապահովագրության զարգացման համար նախադրյալների ստեղծում, գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության մեխանիզմների ներդրում, արտահանման վարկերի ու ներդրումների ապահովագրության կազմակերպում, հանրապետությունում առկա մեծ և առավել վտանգավոր (սեյսմիկ, բնական աղետներ, ատոմային, տեխնածին, էկոլոգիական) ռիսկերի կառավարման համակարգի ստեղծում և դրա ընդգրկում ապահովագրական համակարգում, ապահովագրական գործունեություն իրականացնողների կարգավորման ու վերահսկողության կատարելագործում, ֆինանսական շուկայի այլ հատվածների հետ ապահովագրական շուկայի ինտեգրացման խթանում, ապահովագրական շուկայի ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում:

Նշված միջոցառումների իրականացումը կնպաստի ՀՀ-ում ապահովագրական համակարգի զարգացմանը, տնտեսության մեջ ներդրումային միջոցների զգալի աղբյուրների ձևավորմանը, ինչպես նաև ապահովագրական շուկայի ինստիտուցիոնալ մասնակիցների ֆինանսական կայունության և համակարգի հուսալիության ապահովմանը:

Պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները, և այդ ուղղությունների առարկայական իրագործման ենթատեքստով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված միջոցառումները:

Եռամյա ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Եռամյա ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունը խարսխվելու է ազատական տնտեսակարգի կառուցման, քաղաքացիական հասարակարգի ձևավորման և ժողովրդավարության սկզբունքների ծավալման քաղաքականության իրագործման հիմունքների ներքո: